

ՊՐՈՖ. Մ. ԱԲԵՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿՆԵՐՆ ՅԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՆՐԱՆՑ ՄԵՋ

(ԱՐՏԱՏԳՎԱԾ Ե ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
1 ՀԱՍՈՐԻՑ)



ՅԵՐԵՎԱՆ 1935

554

8147.9251
Ա-13

ՊՐՈՑ. Մ. ԱԲԵՂՅԱՆ

ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱՎՆԵՐՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՐԱՆՑ ՄԵՋ

1604
1554

~~ՄԱՅ 1952~~

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՐԿԱՐԱՆ
ԳՐԱԳԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ԿՈՒՆՍՏԱՆՔԻ ԱՊ ԱՐՄ. ԵՍՐ

Յերբ մի տարի առաջ*) այստեղ Վ. Բրյուսովի դասախոսութեան ժամանակ ուսերեն լեզվով կարգացվեց Յրիկի «Գանդատը», շատերը դարձանում էյին, թե միթե այդքան վաղ, 13-րդ դարի վերջում կամ 14-րդ դարի սկզբում (յերբ դեռում էյին Յրիկին), կարող եր մեղհում առաջ գալ այնպիսի ազատախոհ բանաստեղծութուն ազգերի և դասակարգերի և առհասարակ սոցիալական անհավասարությունների մասին: Դրա համար և վրամանք Յրիկին ավելի ուշ ժամանակի յերգիչ էյին համարում: Թե 13-րդ դարում, յերբ ապրել և Յրիկը, խեղապես կարող եր հայերի մեջ այդպիսի բանաստեղծութուն գոյութուն ունենալ, այդ շատ պարզ տեսնում ենք իրական կյանքի այն պատկերից, վոր գծագրված և մեր հին առակների մեջ, վոր ինչպես ուրիշ յերկրներում, նույնպես և մեզնում 12 և 13-րդ դարերում առանձնապես սիրում և մշակում էյին:


Բայց նախ, թե յե՛րբ և ի՞նչպես և առաջացել առակների գրականությունը մեր մեջ, կամ առակները Հայոց գրականութեան առաջին շրջանում:

Ինչպես մեր ամբողջ հին գրականությունը, նույնպես և առակների տեսակը ծագում և մեղհում վոչ թե ազգային հողի վրա ժողովրդականի մշակությամբ, այլ թարգմանությամբ:

Ն. Մարը**), — վորի սիրով կատարած յերկարամյա հետազոտութեան և արժանացել մեր հին գրականութեան այս ճյուղին և վորի շնորհիվ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և ունենք վարդանայ առակների մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու, — ցույց և տալիս, վոր թեպետ և եղողոսի անուշը չի հիշատակվում հայոց հին գրականութեան մեջ, բայց հայերը հնուց անտի ծանոթ են յեղել նրա առակներին, վորոնցից վաթուանից ավելի թարգմանած ունենք գրաբար լեզվով և ուրիշ մի քանիսը իշատակվում են մեր հին մատենագիրների մեջ: Բացի այդ՝ 7-րդ դարում ավանորեն ճարտասանութեան կամ քերթողական արվեստի գրքերից

*) Այս հոդվածը տպագրվում է 1917 թ թիֆլիսում՝ Հայ Գրողների Ընկերության թարգարակային կոնֆերանսում իմ կարգացած դասախոսութունից վորոշ կրճատո. Մեերով և ավելու. Մեերովի ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի ցանկութեամբ ավելացրած են առակների քննարկները (վոր յես առաջ կարգացել են գրքերից), ու դրա հետևանքով կատարված են մի քանի փոփոխութուն նույն նյութի մասին տարիներ առաջ մի քանի անգամ տպագրել են Եմբրածն, ճեմարանում հայոց գրականութեան գաղթիցից մեջ, այլ և Կատարյուս՝ Յերևանի Պետ. Համալսարանում: Մ. Ա.

**) Н. Марр «Сборники притч Вардана», ч. I, исследование. СПб. 1899. նույնի. Ժողովածուց առակաց վարդանայ, մասն Բ., քննարկը, ՍԳ. ԻՅԽԳ. նույնի, Կ. III, приложения Пб. 1894.



14555

Թարգմանվում են Ուլիմպիանոս առակաները, վոր Եզոպոսի առականերից են հետորական խմբագրությամբ. այդ առակաները. ըստ Ն. Մանի, թվով տասներհինգ են յեղել, վորոնց վրա հետագայում ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և յերեք: Հավանորեն 6—7-րդ դարում թարգմանվում է նաև «Բարոլախոս» (Ֆիզիոլոգ) կոչված գիրքը, վորի հեղինակը հայտնի չէ և վորի մեջ խոսվում է կենդանիների «բարոյքի», այսինքն բարքերի, բնավորության մասին: Այդ գրքին ծանոթ են յերևում Եռնյիսկ մեր կլասիկ հեղինակները՝ Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի և ուրիշները: «Բարոյախոս» և Եզոպոսի առակաները, Ուլիմպիանոսի անունով, շատ սիրված են յեղել հնում հայ հեղինակներից: Հատ-հատ ուրիշ առականեր ևս հիշատակում են մեր հին հեղինակները:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից յերևում է, վոր 11-րդ դարում դպրոցներում աշակերտներին քերականության և ճարտասանության հետ սովորեցնում էին նաև «առասպելավարժություն», այսինքն աշակերտներին գրել, աճգիր անել և մեկնել էյին տալիս առականեր, վոր և մի շատ հարմար վարժություն է յեղել ապագա մեկնարաններ պատրաստելու համար: Առակաների հայկական ժողովածուներ, սակայն, հայտնի չեն, իսկ ժողովրդական առակաները մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մտածել անգամ կարելի չէ մինչև 11-րդ դարու կեսերը և ավելի ևս ուշ: Ժողովրդական առակաները, վորոնցից մի քանիսը մեջ են բերում հին հեղինակները, նույն բախան են ունեցել, ինչ վոր մեր հին ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, վոր դրականությունը դեռ յեկեղեցականների ձեռին էր. իսկ յեկեղեցականը, ինչպես հայտնի չէ, իր կոչումով արդեն ընդունակ չէր զարգացնելու բազմակողմանի գրականություն, մշակելու թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առականերն են: Դրանք մեր գրագետ յեկեղեցականի կողմից վոյ միայն արհամարհված են յեղել իբրև գեղջկական, ուստի և աճարժեք բաներ, այլ և իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Չանսպասելի տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «հաւանմայր», «հացանմայր», «հատանարցք». մերժված և հաղորդության անարժան են համարվել նաև «զրախասք», զրատեսք», շրջող տանջ ի տուն, հետաքրքիր, առասպելախաւսք»): Վերջինը վերաբերում է առակախոսներին. հայերեն «առասպել» բառը, բացի իր իսկական նշանակություններից, գործածվում է նաև իբրև առակ, ինչպես վոր սույն կրկին նշանակություններն ունեն համապատասխան հունարեն mythos, լատիներեն fabula բառերը: Միևիկար Գոյր գրում է հաճախ «խրատէ առակս», «յանդիմանէ առակս» և այլն, «Ողոմպիանոս առականերից» 3-րդի խրատական մասն սկսվում է «խրատէ առասպելախոս ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առակախոսները:

Այսպես ուրեմն հնում հալածված են յեղել ինչպես գուսանները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առակախոսները:

*) Տես՝ Н. Марр, «Сборники притч Вардана», ч. I, յերես 280. Ժան. մի ձեռագրի նկարագրի մեջ:

Բայց և այնպես կյանքը կանգ չի առնում: 10-րդ դարուց ի վեր ավատական շրջանի յերեք վիճակների՝ ազնվականության, հոգևորականության և շինականության կողքին տնտեսապես ու մտավորապես բարձրանում է քաղաքացությունը: Բազրատունյաց իշխանության յերկրորդ շրջանում ու ծագվում են վաճառական քաղաքները. բարդավաճում են յերկրի արտադրողական ուժերը, արհեստներն ու արդյունադրությունը: Շահաստանները, ինչպես՝ Անի, Արծն և ուրիշները, մեծ առևտուր ունեյին արեւիլքի և արեւմուտքի հետ: «Մով և ցամաք երկն՝ ր և առատանայր կրել ի ամազգորութիւն իւր», ասում է Ա. Լաստիվերացին իր հայրենական Արծն քաղաքի համար. «Բարեհացն առատութեամբ պսակեալ», «վաճառականք փառաւորք». «Իբրև ակն մի պատուական՝ լուսագեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեին գեղեցիկ, բոլորովին զարգարուն»: Այսպես և Անին և ուրիշները, Բնականարար առաջ է գալիս դրամական տնտեսություն. արծաթը «յարգի եղև», ասում է Լաստիվերացին, և այս վոյ միայն քաղաքներում ապրող հողատեր ազնվականներ ի ու վաճառական քաղաքացիների համար, այլ և հոգևորականների: Դրամը մի նոր աստված էր դարձել. մարդիկ շահի յետեից էյին ընկնում: Նրանց հարստության աղբյուրը կազմում էր, սակայն, վոյ միայն առևտուրն ու արդյունադրությունը, այլ և աշխատավորների շահագործումը: Բուրժուազիայն շահագործում էր մանր արհեստավորներին: Հողերը կենտրոնանում էյին աշխարհական և հոգևորական իշխանավորների և վանականների ձեռին, վորոնց տնտեսության հիմքը կազմում էր յերկրագործությունն ու շինականների հարստահարությունը, թեկուզ և կային «հողագործ իշխաններ» և վանականներ, վորոնք իրենք անձամբ էյին մշակություն անում:

Այս տնտեսական-սոցիալական հարաբերությունների հետևանքով տեղի չէ ունենում ճնշող և ճնշված դասակարգերի միջև մի սուր պայքար, վոր արտահայտված է առակաների մեջ: Մինչ մի կողմից աշխատավորությունը գլուղում ու քաղաքում շատ նեղ դրության մեջ էր, մյուս կողմից մարդիկ փարթամացած, լինին աշխարհական թե յեկեղեցական, սկսում են ուրախ-զվարթ, ձոխ կյանք վարել հակառակ հին ճգնավորական խրատակեցությանը: Հողին, հողերը, վոր դեռ գերիշխող էր 10-րդ դարի յերկրորդ կեսին, յետ է մղվում, և առավելություն է տրվում մարմին, մարմնավորին: Կրոնի մեջ զա արտահայտություն է գտնում թոճադակեցող աղանդով, վոր Յեկեղեցու հակառակ մի ուսում էր:

Քաղաքների այս տնտեսական և մտավոր զարգացումը 11-րդ դարի յերկրորդ յետորդում, արդարև, կանգ է առնում վորոշ կողմերում և նույնպիսի յետ է մղվում Սեջուկյան թուրքերի ավերածությունների հետևանքով. բայց Մելիք-Շահի թագավորելուց ի վեր (1072—1092) յերկիրը խաղաղում է

Այսպիսի յենթադրություններով, սակայն, և այն հանգամանքով, վոր առակների ձեռագիրները հետին դարերի յեն, կարելի չե անստույգ համարել Մխիթարի հեղինակ լինելը: Բանը վոր յենթադրության և հասնում, կարելի չե շատ տեսակ-տեսակ յենթադրություններ ել անել: Քանի վոր մեր ձեռքը չի հասել Ծործորեցու արտագրածը, կարող ենք յենթադրել, վոր դա ունեցած ե յեղել Մխիթարի անունը, բայց սկզբի թերթը կարող եր մաշված կամ պոկված լինել, ուստի և հիշված ժողովածուն կազմողն առակներն անանուն դրած լինելը իր ժողովածուի մեջ: Կարող եր ժողովածուն կազմողը, քանի վոր բոլոր առակները չեք արտագրում, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ չդնել առակների հեղինակի անունը: Նա կարող եր նույնիսկ դրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ թե անզգուշութամբ Մխիթարի տեղ Ծործորեցի դնել, և այլն և այլն:

Այսպես ուրեմն, կարելի չե լուր յենթադրության վրա հիմնվելով հարցական թողնել այդ առակների հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրչակների ձեռով ավելացրած համարել Մխիթարի անունը, վոր կա ամբողջական ձեռագիրների վրա, թեկուզ գրանք շատ հին չլինեն:

Ինչ Մխիթարի անունով մնացած առակները նրանն են, այդ ցույց ե ստիճան նրանց բովանդակությունն ել, վոր, ինչպես ն. Մառն ել դիտում ե, ստանում ե մեզ այն ժամանակը, «յերբ հայերը դեռ քաղաքական ազատություն ունեցին և մահմեդականներից ավելի ուժեղ ելին զգում իրենց»: Յեղ այդ հենց Մխիթար Գոշի ժամանակն ե, 12-րդ դարի յերկրորդ կեսին, յերբ հայերը թե արևելքում և թե արևմուտքում — կիլիկիայում շատ ավելի ուժեղ ելին, քան մահմեդականները:

Կանգ առնենք մի քանի ուրիշ հանգամանքների վրա ևս: Այդ առակների հեղինակը շատ հմուտ մարդ ե յեղել, ինչպես յեղել ե և Մխիթարը: Նա դիտակցարար վերաբերվելով իր գործին՝ հարկ ե համարում մեկ-մեկ ծանոթություններ տալ իր կատարած գործի և ընդհանրապես առակների մասին իրրև մի գրական տեսակի: Այդ ծանոթություններից հենց իմանում ենք, վոր այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն ե մեր մեջ:

Ամենից առաջ տեսնում ենք, վոր առակներ ժողովելն ու գրելը դեռ անպատշաճ ե համարվում. ուստի և հեղինակը բացատրում ե, թե ինչու չե լինի գրելը. «Թէլպէտ անըմբոն [անպատշաճ Մ. Ա.] ասացեալքդ կարծի, սակայն թանձրամասց առաւել ախորժեղի երեին, որոյ աղազաւ սակաւդ յօժարեցաք գրելը» (Մխ. Առ. ԻԵ, յեր. 30): Ապա այդ գործն ուրիշները ծաղրելի յեն համարում, և հեղինակը խնդրում ե, վոր չծաղրեն իրեն Ամեն անգամ վոր մեր հեղինակները մի նոր բան են մտցնում գրականության մեջ, ստիպված են կամ ապացուցանել, թե թույլատրելի չե իրենց արածը, կամ խնդրել, վոր չծաղրեն իրենց: Այսպես, Կորյունը մեր գրականության սկզբում դեռ ստիպված ե յերկար ու բարակ ապացուցանել, թե վոչ միայն թույլատրելի չե, այլ և հարկավոր ե Մեսրոպ Մաշտոցի նման մարդկանց վարքը գրելը. Ներսիս Շնորհալիքն իր «Ողբերգութեան» հիշատակարանում

ստիպված ե ապացուցանել, թե կարելի չե մեր այժմ սովորական դարձած տաղաչափությամբ, վոր այն ժամանակ գործածվում եր միայն աշխարհիկ յերգերի համար, բանաստեղծություն հորինել նաև հոգևոր բաների մասին:

Յովհան Մամիկոնյանը ժողովրդական զրույցներից ու յերգերից խմբագրելով «Տարոնոյ պատերազմը», վերջը գրում ե. «Յորժամ զգարագրութիւնս զայս ընդօրինակէք, մի ինչ թուեսցի ծաղր ու մեք»... Նույն իսկ Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» համար, վոր նորությունն եր մեր գրականության մեջ, գրում ե. «Եւ արդ մի ոք պարսաւեսցէ զասացեալս, զի թէ տխմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպահասն ի սմանէ. 199է. զերկոցունցն պատրաստ եմք սիրով ընդունել զկաման» (Դատաստանագրք» Վաղարշապատ, 1880 «Նախադրութիւն», յեր. 17): Ընդ տ այսպես և նույն Մխիթար Գոշն առակների համար գրում ե վերջաբանում. «Եւ արդ մի ոք ծաղր առնիցէ զմեզ, զի առնու ի սոցունց ի գրուցատրութիւն և յասացուածս ի դէպ համարեցաք, քան զախարհականացն վարիլ սովորութեամբ: Եթէ հաճոյ ոմանց թուիցի, տեսա՛ն շնորհ. ապա թէ սչ, թողութիւն մեզ արասցէ սիրով նորին» (յեր. 153):

Մեծ դժվարությամբ ուրեմն, նույն իսկ առակի տեսակը մուտք ե գործում յեկեղեցականի գրականության մեջ: Դա ծաղրի առարկա չե, զի դրա առասպելն աշխարհիկ բնավորություն ունի. և յեթե յեկեղեցականը մշակում ե այդ, վորովհետև թանձրամիտներին ախորժեղի չե առակների առասպելը, և դրանով հեշտ ե սովորեցնել ու կրթել:

Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում ե բնականաբար յերկու մասրուն պատմվածքը և խրատական յեզրակացությունը:

Պատմվածքը, — վոր նա կոչում ե առապ, գաղափար, օրինակ, եղանակ և այլ բառերով, — ըստ Մխիթարի՝ լինում ե յերեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական: Բարոյական առակները (բարոյք, բարք = բնություն բառից, վորից և «Բարոյախօս» զրքի կոչումը) անված են կենդանիների բարքից, բնավորությունից կամ բույսերի հատկություններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողություն: Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում ե կենդանիներին, յերբեմն և բույսերին, իրրև գործող անձերի. իսկ ստեղծական առակներն անված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Խրատական յեզրակացությունը, — վոր հեղինակը կոչում ե՝ խրատ, Ուղեցանկ, համարտ իրև և այլ բառերով, — յերկու տեսակ ե՝ աշխարհիկ և յեկեղեցական. «Դիցուք և սակաւուք առակք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զճշմարտութիւնն աշխարհօրէն և եկեղեցականապէս» (Մխ. Առ. յեր. 128):

Առակների յերկու մասերից հոգևորական հեղինակի համար բնականաբար ավելի կարևոր արժեք ունի այս յերկրորդը, խրատական մասը, այն ել ավելի եկեղեցական մեկնությամբ, վորովհետև հեղինակը ցանկանում ե, վոր խոսակցության ժամանակ մեջ բերվեն այդպիսի մեկնությամբ առակներ, քան աշխարհականների սովորությամբ վարվել, այսինքն առակ-

ները լուրջ աշխարհական մեկնությունը պատմելու Ուստի խրատները մեջ կարևոր տեղ բռնում են հոգեշահ խրատներն ու հոգևոր առաքելությունները: Բայց Մխիթարի նման մեկը չեր կարող անուշազիր մնալ դեպի կենցաղական խրատը, առորչա ընկերական հարաբերությունները, սոցիալական և ազգերի հարաբերության և նման խնդիրները կամ «ճշմարտութիւնն աշխարհօրէն»:

Մի անգամ, վոր հեղինակի համար առակի մեջ եյականն է առակի «ճշմարտութիւնը», ուստի և նա առակը մշակում է այնպես, վոր կարևոր տեղ բռնի «ճմարտութիւնը»: Կը նշանակե՛լ առակը հորինվում է վոչ իբրև ինքնուրույն բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցական, դիդակտիկական յերկ, վոր նպատակ ունի ակործելի ձևով խրատել և ազգերի Դրա համար առակի առասպելն այնպես է հորինվում, կամ փոփոխվում (յերբ ուրիշ ազդուրներէց է առնված), վոր հարմարվի բարոյակրթական մասին, կամ գործողութիւնն այնպես կարճ է պատմվում, վոր յերբմն նույն իսկ խրատական մասն ավելի մեծ տեղ է բռնում, քան պատմվածքը: Ուստի սակավ ենք գտնում բանաստեղծական նկարչութիւնը, կենդանիները Ուստի սակավ ենք գտնում սեղմ ու պայծառ պատմվածքի մեջ, վոր առակները կենդանութիւնն է կազմում: Արդարև, Մխիթար Գոշն էլ սեղմ ու հակիրճ է, բայց վոչ միշտ պայծառ ու կենդանի: Սովորաբար մի յերկու ընդհանուր դժեր է տալիս նա և ապա իսկույն անցնում է խրատին: Յերբմն էլ պատմվածքն այնքան կարճ է և այնպիսի, վոր դժվարութեամբ կարելի չէ յեզրակացութիւն հանել, կամ հանած յեզրակացութիւնը շատ թույլ կապով է կապվում պատմվածքին, կամ համապատասխան չի նրան:

Հեղինակը, սակայն, իր խրատը բավական չհամարելով՝ դեռ գրում է «Զատեալ նշանակալ չափաւորապէս համեմատեցաք՝ պատճառս տալով տեսողաց բանին նմանապէս զթերին լցուցանել» (Մխ. Առ. յեր. 30): Կը նշանակե՛ Մխիթարն առակն ասողին ազատ է թողնում մեկնութեան թերին լրացնել, ճիշտ ինչպես նա իր Դատաստանագրքի «կատարեալ» ընթերցողի համար ևս ասում է, թե՛ «զպական ի սմանէ ինքն լցցէ»: Այստեղ էլ, ուրեմն, առակները և Դատաստանագրքի հեղինակը նման ձևով է մտածում:

Ինականաբար պիտի սպասենք, վոր Մխիթար Գոշն առակները մեջ ևս նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ վոր Դատաստանագրքի մեջ: Այստեղ նախադրութեան մեջ պատվիրում է, թե դատավորները պիտք է ուղիղ դատաստան անեն («Դատ.» յեր. 28) և ապա (յեր. 32) գրում է. «Եւ թէ ոսոխքն յատենի անդ բանակուի լիցին մի տայցեն թույլ, ալ սաստեսցեն... Ուսցին և դատախազքն, թէ ոչ վասն վիճոյ գան յատեանն... ըստ կարգի տայցեն խօսել ոսոխացն»: Այս յերկու դադափարն էլ, դատավորի արդար մարդ լինելու հետ մխասին, արտահայտված ենք գտնում մի առակի մեջ:

Հարալ դոյն տարախի քակեալ, և իւր շինեալ, և յեղև նոցա երթալ առ արդարն արդիլ ի դատաստան. և անդ զմեծանս նախատելն և պարծիւն, տարակող յախոուութեամբ, կրօնաորութեամբ, և հարալ պիտք քառասունէիւք, և նախատի ոմն կեղծաւորութեամբ, և ոմն զայոյ ուտեոյ զվատասին: Իսկ դատաւորն երկուցն սաստէ և հարցանէ զհարալ. թէ րնգէ՞ր քակեալք: Եւ նա ասէ. Եւ նուաժոն նշան ինչ ոչ տեսի, և վասն այն առ ինձ: Հարցանէ դարձեալ. Գնա էիր եղեալ զոր տեսի: Եւ նա ասէ՛ ոչ—Եւ կամ ոչ էր երկու հեծան եղեալ ի վերայ միմեանց: Եւ ասէ՛ եղեալ էր: Հրամայէ անդէն զարձուցանել, նա և տուգանս ետ տալ:

Չգատաստան ուղիղ հրամայէ առակս դատել, և ոչ յատեն մեծարանել, և կամ թշնամանել զմիմեանց զատախազաց: Եւ դարձեալ զի զոր շիցեմք եղեալ՝ ուսուցանէ շառնել, և զինուածս յայոյ՝ թէ և յոսի իցէմ, չքակել:

Մխ. ձՆ. 116.

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, թե ինչպես վոսոխները՝ Հավրալն ու Տատրակը, դատաստանի յեն գնում արդար՝ Արազլի մոտ. բայց նրա առաջ իրար նախատում են, իրար հետ վիճում են և ամեն մեկն իր արժանավորութեամբ պարծենում: Դատավորն, յերկուսին էլ սաստում է, ապա հարց ու փորձ անում և դատաստան կտրում:

Տեսնենք մի ուրիշ դիժ էլ: Դատաստանագրքի մեջ (Նախադրութիւն, յեր. 29) Մխիթարը պատվիրում է, թե «Դատաւորն մի լուսիցէ զոսոխին կամ զդատախազին բանն միայն»... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝ չպիտի դատ անի: Առակներից մեկի մեջ ասում է, թե անընտրող դատողները՝ լինեն թաղավոր, իշխան, դատավոր, թե յեկեղեցու առաջնորդ, «ամփորձապէս դատապարտեն», այսինքն առանց քննելու դատապարտում են նույն իսկ արտաքին տեսքից կամ համբավից (այսինքն ուրիշներից լսելով). և առակխոսը պատվիրում է, թե չպետք է թի տեսլենէ կամ ի համբաւէ դատել:

Յանմտից ոք ետր գունապի՝ կարծելով զնա դմիկ, որոյ զայրացեալ ասաց. Ո անգորոյն, դոտենի ի պողո, արժան է հանաչի, և ոչ ի տեսակէ:

Նշանակ բերէ առակս զանընտրող դատողս՝ զթաղաւորս և զիշխանս և զդատաւորս և զառաջնորդս կեղեցեոյ՝ զնոսս յանդիմանելով, զի՛ ամփորձապէս դատապարտեն. զի ճշդիւ գիտել է ի գործոց նոցա (ըստ որում տէրն իսկ ասաց, թե ՚ի պողոյ նոցա ժանիղից զնոսս) և վոչ ի տեսլենէ կամ ի համբաւէ դատել. որով և բազում վնաս գործի՝ զբարիս իբրև զչարս խոշտանգելով:

Մխ. ԺԸ. 19.

Նկատենք և հետևյալը: Մխիթար Գոշն առակները, վորոնց թիվը 190 է, խմբագրված են, ինչպես վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին էրոք յեղել է Մխիթարը: Դրանց համար նա ոգտվել է եզրպոսի առակներից ու Բարոյախոսից, ինչպես և այլ գրավոր ազդուրներից ու ժողովրդական առակներից: Անպայման կան և այնպիսիները, վոր հեղինակի իրեն ստեղծածն են: Նա, ինչպես յերևում է, մեծ նյութ է ունեցել ձեռի տակ, բայց ամեն ինչ վոր ունեցել է, չի գործադրել. «Զբազումս ՚ի գիտեիաց և յանգիտեիաց թողաք իբր համալուրս յօրինակս և յառակս» (Մխ. Առ. յեր. 29): Բայց ամեն ինչ, վոր նա առել է իր ժողովածուի մեջ՝ շատ վորոշ կարգով դատավորել է ըստ նյութի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ յերկինք

ու յերկիր և յերկնայիններ և ապա՝ բուսներ, բուսներ, կենդանիներ ու մարդիկ: Ամբողջի մեջ յերևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու վոզին: Այսպիսի միակերպությունն չունեն Վարդանա առակները, վորոնք և մի մարդու գրչից չեն դուրս յեկած և վոչ էլ մի դարու արգասիք են:

4

Ինչպես են ծագել Վարդանա առակները, վոր մեր միջնադարյան գրականության մեծ հարստությունն են կազմում: Այս մասին հղարկելով Ն. Մառի վերևում հիշված մեծ աշխատանքին, այստեղ միայն հետևյալը: Վարդան Այգեկցին, վոր Վարդանա առակների նախահայրն է, Մխիթար Գոշից մի սերունդ էրտեսել: Մխիթարը վախճանում է 1213 թ. Վորոնի ձերբակալում հասակում, Վախճանը ի առերթը, իսկ Վարդանն այդ ժամանակ արդեն անվանի յեր դարձած իր բանաստեղծական քարոզչերով, վոր ուղղում էր հարուստ քաղաքացիների և վաճառականների դեմ: Բայց նա, յերևի իր քարոզչների պատճառով, ստիպված է լինում փախչել իր սիրած Դուքից (Կիլիկիայում): Յերկու տարի թափառելուց և շատ նեղություններ կրելուց հետո՝ նա 1212 թվին ապաստան է գտնում Սև լեռան վրա կամ մոտերը գտնված մի անապատում, վոր կոչվում էր Այգեակ: Այստեղ նա ապրում է մինչև խորին ձերբակալում, ուստի և կոչվում է Այգեկցի: Նա իր կյանքի յերկրորդ մասի ընթացքում պարապում է գլխավորապես գրականությանը: Նրա գրական ամենամեծ նշանակությունն այն է, վոր նա, ինչպես Ն. Մառը ցույց է տալիս, ստեղծել է քարոզչերի մի առանձին տեսակ, վորոնց մեջ գործ է ածում առակներ, վոր նրա գաղափարները պարզում և հասկանալի յեն դարձնում:

Նրա գործածած առակները դուր են գալիս և բերանացի ու գրավոր տարածվում են, և, ինչպես կարծում է Ն. Մառը, ամենայն հավանականություններ, բայց դուրս է ուրիշները նրա ճառերից հանել են առակները և ի մի խմբել, վորով և առաջացել են Վարդանայ առակները:

Այդ առակների ժողովածուները, սակայն, անփոփոխ չեն մնում, այլ մինչև 17-րդ դարի կեսերը յենթարկվում են մեծ զարգացման: Հետզհետե Վարդանին շատ նմանողներ են դուրս գալիս և կազմում են զանազան նոր ժողովածուներ թե՛ Վարդանի առակներից և թե՛ ուրիշ աղբյուրներից: Այսպես զարգանում են առակների ժողովածուները, զի դրանց համար պահանջ կար: Գրանք հարկավոր էյին, նախ՝ քարոզության համար և պետք է ողնային քարոզչներին, թե՛ վոր հոգեշահ խրատի համար ինչ առակ կարելի յեր պատմել: Առակների ժողովածուներն. ուրեմն, ծառայում էյին նույն գործնական նպատակին, վորի համար և կիրառել էր Այգեկցին: Ապա, ինչպես սկզբում ասվեց, առակներ սովորեցնում էյին դպրոցներում և զանազան ձևերով վերամշակել էյին տալիս, ուստի և կազմվում էյին նոր ժողովածուներ հաճախ վերամշակված ձևերով: Բայց վոր գլխավորն է՝ 12—13-րդ դարերում ամեն տեղ առասարակ, այնպես էլ մեղմում, քաղաքացիների սիրում էյին պատմվածքներ, առակներ ու գրույցներ և առասպելներ:

Այս վերջին հանդամանքը պատճառ է դառնում, վոր շուտով Վարդանա առակների ժողովածուների մեջ (Ն. Մառի խմբագրությունը բ. մասն «Ժողովածուք առակաց Վարդանայ») մտնում են վոչ միայն առակներ սովորական մտքով, այլ և ամեն տեսակ պատմվածքն էր, վոչ միայն զրբերից, այլ և ժողովրդի բերանից, վերջից ստանալով մի հոգեշահ խրատական մաս, վոր շատ անգամ բունաղբյուրի կերպով կցված է բուն պատմվածքին: Այսպես «Միամիտ գողը» գվարճալիքը:

Երկու գողը դնացին ի մեծատան միում յերդիք և կամեն գողանալ զինչս նորա եւ կը լուսնկայ, և իմացաւ այրն, որ գողքն ի յերդիքն եկին եւ ասէ կինն ցայրն, թէ՛ Ամէն գամնն և զբամն և զուժամնն սուտի է եկեր քեզ: Եւ ասէ այրն. նրթայի ի գողութիւն ի զիչիքի մեծատանց երթիք ի լուսնկայ լուսոյն, որպէս որ այժմ կայ. և շուք լուսնկին յերդից ի վայր ցայթէք զերթ հիմայ. և ես զիրկ առնէի զլուսնկին շուքն՝ բռնէի և ի վայր կըջնայի ի տունն և բան մի կասէի: որ ինչ զեղեցիկ զուժաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերեւոր և առնէի ի շուքն կազէի և զիս այլ ի հետ զուժամնն, և շուքն զիս ի վեր կուճանէր ի տունն (տանիսն). և այսպէս զամէնն շահեր եմ: Իրբն լսեցին գողքն զբանս զայս, խիտ ուրախացան և հաւատացին պատրդական բանիցն և զրկեցին զշուքն, որ ի վայր իջնուն, անկան և խկաց թափեցան եւ այրն յարեաւ և ետցան զնոսա:

Տուցանէ տակա, թէ՛ մարքն որ գողանայ և ստանալական բանին հավատայ, նա որպէս այն գողքն կորնչին: և պատճառն ի կնջնէն ելաւ, որ այն գողքն յերդից ի վայր անկան կինն ի կողէն է, և կողն ծուռ է և ինքն չար է:

Ա. Ա. Վարդ. Բ., 298. ՄԱՀ

Նույնպիսի յն և «Ճուհույ աղայ» գվարճալիքն իր մեկնարանությունը, վոր խրատ էլ չէ:

Ճուհուն տղան դատու գեկան մի կարմիր և ճայնեաց մեծածայն, թէ՛ ես փոզ մի գտայ: Մի մարդ մի անդ կար և ասաց, թէ՛ Այդ փոզոյդ առ քեզ. Գ. փոզ և տուր: Ասաց՝ Չէ: Ասաց՝ առ Փ. փոզ: Ասաց՝ Չէ: ասաց՝ Առ. Բ. փոզ: Ասաց՝ Չէ: Եւ նա, ետ և նայ շէշ՝ ասաց եւ յորժամ թրեցաւ Ֆրորու մի փոզ, ասաց ճոհոյն աղայն, թէ՛ Մարտչէ քան զէր, որ տամ եւ նայ զնայ: Եւ նայ ասաց, թէ՛ Հաչէ քան զշուն, որ տամ եւ նայ հաչեց եւ յայնժամ ասաց ճուհոյն տղայն, թէ՛ Գու շուն և էշ խնայաք զիտեն, որ այս կարմիր գեկան է, և ես ոչ գիտեմ:

Տուցանէ առակ, թէ՛ ի մանկանց և ի աղայոց մէջն կայ, որ զմեծամեծ մարդիքն խաբեն և ոչ տանրկուն և խարուն, և կան յաշխարհի մարդիք և մանուկ տղաք և ճգնաւորք, որ դատանայ ծաղր առնեն և ոչ խարուն և ոչ կորնչին:

Ա. Ա. Վարդ. Բ., 175. ՃՈԸ.

«Երէց ասորի և երխտասարդ հայ» պատմվածքը, վորի մեջ ասորի բանանայլե ազգաբնությունն է ծաղրում:

Երէց մի ասորի բարի և իմաստուն և մարդ մի հայ կուռէին ի հաշիւն, որ կայր ի միջի իւրեանցն: Ասէ հայն. Առնում զքարն և կտորեմ զ. լր. ասամունքք, որ կայ ի բերանդ: Կայրմացաւ այն էրէցն ընդ նորա ասելն. զնաց առ իրիցիկինն. պարկեցո բորք վեր * և ասէ: Պաւլոս, առ մոմեղէն, առ եկ անս ի բերանս. թէ՛ քանի աղակ կայ ինձ: Եւ աս էրէցիկինն զլուսն ու կամրէց. նայ այն էր, զոր նայ էր ասացեր. լր. աղակ. զոր նայ էր ասացեալ: Գայ ըսաւ մի առ հայն և ասէ. Փառք աստուծոյ, կամ իմաստուն մարդ ես զուն կամ սուրբ հոգին ի քեզ թակեալ է. դու զինչ գիտացեր, թէ՛ իմ ասամունքք. լր. էր: Եւ նայ ասէ. Եիմ ասամունքք իրացի եւ շուտ հաշտեցան:

* Այսինքն՝ «Պարկեցաւ պորտ ի վեր», Մ. Ա.



Յուզանէ առակս, թէ յիմ մարմնոյն զձերս զիտացի, որզեակէ իմ. զի հասարակած և մեղքն և պատերազմ սատանայի, և միապէս կորուսանէ զամենայն մարդ՝ զժողոջն ասնէ:

Ա. Ա. Վ. արդ. Բ. 63, ԽԳ.

«Հարսն և սկեսուր և սկեսրայր» զեղեցիկ առակի մեջ շատ պայծաս ու նկարեն յերևում ե ընտանիքի մեջ հարսի ստրկական վիճակը բնակավ սկեսրի և սկեսրայրի ձեռի տակ, վորոնց խոնարճ ծառան և նա և հլու հնազանդութեամբ ու մեծ համբերութեամբ պարտավոր ե կատարել նրանց ամեն անմխտ պատվերները:

Նոր հարս մի եղև խոնարճ և համբերող. և կամեցան փորձել զնայ սկեսուրն և սկեսրայր նորա Ասէ մին, թէ՛ Զգուռն փակէ: Եւ միւսն ասէ. Բաց Մին ասէ. Ել փակէ զգուռն հողմ է. Եւ իբրև զնաց և փակեաց զգուռն. և միւսն ասէ. Ել բաց զգուռն, զի ծուխ է: Եւ սկեսրան ասել՝ փակէ և բաց: Եւ նայ սկեսուր փակել և բանալ կարգաւ և ասէ. Քեզ փակեմ և զորա, բանամ ևւ յերկարեաց և ոչ բարկացաւ:

Յուզանէ առակս, թէ առաքիլացն և ժողովուրդն մեծ համբերութեամբ և հեղուփեամբ քարոզեցին աշխարհի և մեծ սպասնալեալք փակեցին զժողոջն, զի մի մտցեն ի նայ. և բայցն զարքայութիւն ողորմութեամբ աստուծոյ և շնորհաւքն, զի սեղաւորք զիմեն և մտցեն ի նայ յուսով սպաշխարհութեամբ: այս է փակելն և բանալն:

Ա. Ա. Վ. արդ. Բ. 67, ԽԸ.

Վարդանա Առակների այս բազմազան մեծ նյութը (Ն. Մառի խմբագրութեամբ 485 առակ հաճախ իրենց վարկանտներով), վոր մինչև 19-րդ դարը շատ սիրելի յե յեղել վոչ պահանջկոտ ընթերցողների համար, զրժբախտաբար իր զարգացման կես ճանապարհին կանգ ե առել, անպայման այն քաղաքական դրութեան պատճառով, վոր ունեւ Հայաստանը 14—17-րդ դարերում: Մի թղութանցի կամ Աղթամարցի, իր խաղաղ անկուռը յաշված, կարող եր իր սիրտ և բնութեան յերզը հնչեցնել և զարգացնել այդ դարերում. առակները զեղեցիկ մշակելու համար, սակայն, բավական չեր մի փոքրիկ խաղաղ անկուռը: Իրա համար պետք եր, վոր խաղաղ ապրելիս լինել և ավելի պահանջկոտ լինել այն հասարակութեանը, այն քաղաքացի բնակչութեանը, վորից ծագել եյին առակները և վորի համար պետք ե արվեստավոր նոր հորինվելին դրանք: Այդպիսի հասարակութեան և այդպիսի պահանջ, սակայն, չկար և չեր կարող լինել 14—17-րդ դարերում, յերբ Հայաստանի քաղաքներն ավերվում եյին և ժողովուրդն ընդհանրապես ավելի հեռադիմում եր, քան առաջադիմում: Այդ պատճառով և առակների ժողովածուները մնում են իրենց նախնական ձևով, բավարարութեան տակ լով միամխտ ընթերցողներին:

Ստեղծագործական հանճարը, կարելի յե ասել, շատ քիչ ե ձեռք տվել այդ ժողովածուների մեջ ամբարված բազմազան նյութերին, դրանք վորոչ ուղղութեամբ բանաստեղծորեն վերամշակելու համար: Թեպետ և կան բնատիր ու կենդանի վոճով համեզ ու սքամխտ պատմվածքներ, ևս ավելի յերկրորդ կամ յերրորդ խմբագրութեամբ, բայց այդ ամենը պատահաբար ե կատարված:

Նույնպես պատահաբար և վոչ զխաղաղաբար ժողովրդականից ծագող առակների և զբույցների հետ մտնում ե նաև ժողովրդական լեզուն և սովոր

կարաճութունը և ընդհանրապես ժողովրդական կյանքն ու վոգին: Իրանց աղդեցութեան տակ, զբական ծագում ունեցող առակներն ևս, վորոնք մաքուր դրաբար լեզվով են, յերբմն վերամշակվում են կենդանի ժողովրդական լեզվով ու ձևով. զործողութեանը դառնում ե ավելի լրիվ, պատմվածքն ավելի շարժուն և լեզուն խոսակցական ու զվարթ: Նյութն ուրեմն արտաքին ձևով կենդանանում և ժողովրդական բնավորութեան և ստանում. բայց այդ արտաքինի հետ ընդհանրապես նաև ներքինն ստանում ե ժողովրդական վոգի:

Այսպիսով ուրեմն առակները դառնում են մի անտակ միջոց ժողովրդական տարրերը մեր հին գրականութեան մեջ մտցնելու, և դրանց միջոցով մեր գրականութեանը հետզհետե մոտենում ե ժողովրդին, յենթարկվում աշխարհիկ հոսանքին: Ուստի, յեթե հին ժողովածուների, ինչպես և Մխիթար Գոշի առակների մեջ յերևում ե ավելի կրոնական ուղղութեանը, հեռազա ժողովածուների կամ հին առակների նոր մշակութեաններն մեջ տեսնում ենք նաև նոր, վոչ յեկեղեցական մտածողութեան յեղանակներ և, վոր գլխավորն ե, ժողովրդական իրական կյանքի պատկերը, մի բոլորովին նոր աշխարհայեցողութեամբ, վոր դտնում ենք նաև Ֆրիկի բանաստեղծութեան մեջ և վոր մեր գրականութեան մեջ չի յերևում մինչև 12-րդ դարը: Յեզ այս վոչ միայն Վարդանա, այլ և արդեն Մխիթար Գոշի առակների մեջ:

5

Տեսե՛նք, թե ինչպես ե գծագրվում հասարակական կյանքի պատկերն առակների մեջ, ավելի Մխիթար Գոշի, նկատի ունենալով, հարկավ, վոչ այնքան առասպելական, վորքան խրատական մասերը, վորովհետե մինչև առաջինները կարող են ընդհանուր բնավորութեան ունենալ և մեծ մասամբ այդպիսի յեն, առաջինները ծագում են հայ հեղինակներից, վորոնք և իրենց դատակարգի գազափարախոսներն են: Յեա այստեղ կանեմ հատկապես, նախ՝ ազնվականութեան և աշխատավոր աստիկ դասի հարաբերութեանը և յերկրորդի պայքարն առաջինի դեմ. ապա՝ այն խուլ պայքարը, վոր յերևում ե մի կողմից՝ քաղաքի տարրեր արհեստավորների, մյուս կողմից՝ քաղաքի և գյուղի միջև. յերրորդ՝ թե ինչ վիճակ ունի յեկեղեցականութեանը և ինչ կարծիք ունեն նրա մասին աշխատավորները, կամ աշխատավորութեան կռիվը հոգևորականութեան դեմ. և վերջապես՝ հոգևորականութեան հայացքը հայերի և այլազգիների իրար հետ հարաբերութեան վերաբերմամբ:

Յերկրի զուլսը թագավորն ե, վոր ունի իր յերկրորդը: Առակախոս Մխիթարը թագավորի յերկրորդն ասհրածեշտ և համարում: «Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց. զի ոմն զբարեկարգութիւն պահեցէ, և միւսն զմարտն վանեցէ»: Մխ. ԿԼ, 64:

Մնացած իշխաններն ել թագավորն ըստ պատշաճի պաշտոններ ե տալիս:

Հայեցեալ բեմովն յերաբանչիւր ազգս կենդանեաց անկաւոր կարգէ իշխանս, զգուարակ՝ անդէոց, և զխոյ՝ հօտից, զնոխազ՝ հօքանաց, և զառիւծ՝ գազանաց, զծի՝ բեմնակրայր, և զարծիւ՝ թռչնոց վարենեաց, և զաքաղազ՝ բնտանեաց, և սահմանէ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել:

Բարեկարգս կամի առնել առակս զթագաւորս, ըստ պատշաճի վիճակի զիշխանս և զգաւաւորս, նմանապէս և յեկեղեցիս ուղղել զկարգս:

Մխ. 29. 70

Թագաւորի գործը գլխավորապէս այնն է, վոր նա կամ ասպատակում և ուրիշ յերկիրներ, կամ թե իր յերկրի մեջ տեղեւոյ շրջելով՝ ծանրանում և իրայիւններէ վրա:

Յետ կարգելոյ զիշխանս ի ջուրն, Լեւիթանն արքայ, ասեն, զիմք է՝ զի ոչ շքելոյ կամ ասպատակեալ եւ նա ասէ. Զի թշնամիք առ մեզ ոչ գոն, և անկարօտ եմք իմէք. զմերս վայելեցուք. և ընդ ձեզ ոչ զբօսանամք, զի մի ծանր ձեզ եղէց: Եւ ասացեալքն հաճոյ նոցա թուեցաւ:

Ահնարութիւն առակիտ այսպէս է. զի թէ թագաւորութիւն յայլմէ ոչ նեղիցի ի թագաւորէ՝ և բազմակն կեանս ունիցի, բարի է խաղաղասէր լինել, նա և ոչ իւրօցն ծանրանալ շրջելով. սպա թէ հարկաւորի ի թշնամեաց, անարգութիւն է ոչ առ պատերազմ:

Մխ. 42. 63

Մխիթարն, ուրեմն, խրատում և, թե յերթ թագաւորը բազմակն ասպրուստ ունի, ավելի լավ և խաղաղասէր լինել, և վոչ իրայիւնների վրա ծանրանալ շրջելով:

Թագաւորը վոչ միայն շրջելով և կեղեքում, այլ և իր մտտ յերկրպագելու յեկած իշխաններից շատին կլանելով իրեն կերակուր և դարձնում: Նրանք ել թագաւորից Կրինակ առնելով՝ ավելի հանդուգն են դառնում, ավելի ևս հորդորում են չարիք գործելու և իրենցից թուլերին և վորքերին են ուտում: Յեղ յեթե թագաւորը մեկ-մեկ մեղադրում ու հանդիմանում և այլպիսի իշխաններին, այդ արժեք չի ունենում:

Մեղադրեցան ձրունք ի թագաւորէն իւրեանց, թէ՛ Ընդէ՛ր զայլս ուտէք զմանուսն: Եւ նոքա համարձակեալ ասեն. Վասնզի ի քէն ուտաք, եկեալ բազմաց յերկրպագութիւն, և կլանելով կերակուր քեզ արարեր. ըստ այսմ և ինքեանք ևս յանդիմանոցն եղեն:

Զայնոսիկ յանդիմանէ առակս, զի որով ինքեանք գործեն, զայլս բաժբասել կամելով առակել ևս ի չարիս յորդորեն՝ քան թէ կարեն. վասն զի գործող՝ քան բանիւ ի զեղ և լինել խրատուն:

Մխ. Ա. 26. 60

Ահա մի թագաւորութիւն, վոր հիմնված և նրա վրա, վոր դորիցը թուլին ուտում և: Իսկական և վերջին ուտվող ժողովուրդն և կամ այլստտող դասը՝ լինի քաղաքացի թե շինական, իսկ ազնվականները՝ թագաւորի իշխաններն և յեկեղեցականները՝ միայն վայելուցն են:

Այսպէս և Մխ. Է. 9.

...Զձեզ իշխանս կարգելով՝ այնպէս թագաւորեալ... Եւ յորինեաց զկարգ թագաւորութեանն յանձն առնով նոցա զորթ՝ զինչպիսի, և զթղենի՝ հիպատոս, զգծնիկ՝ զահնայտ, և զնաննի՝ բժշկապետ, և զայլս ի պտղոց ի դարմանս, զմայրս՝ ի շինուածս, զանասա՝ յայլուս զմորենի՝ ի բանտ, և զայլսն ամենայն յերաբանչիւր գործս:

Այլովոյնիցը հասարակ ժողովուրդն և, վոր, հարկավ՝ գոհ չէ իր վիճակից. ուստի առակախոսը յեղբակացնում և.

Յանդիման կացուցանէ առակս, թէ ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից:

Շատ տխուր և այդ թագաւորութեան դրութիւնը:

Մխիթարի մի շարք առակներն մեջ այս սոցիալական անհավասար դրութիւնը, ինչպիսի կոտեսներ, խիստ զգալի յի: Ժողովուրդն իշխանների սեփականութիւնն ու ստացվածքն և: Նրանք շատ ուրախանում են, յերթ իրենց հպատակները հաջողութիւնն են ունենում, բայց այդ վոչ թե իրենց բարեսրտութիւնից, այլ վորովհետև այդ հաջողութիւնն ել իրենցն են համարում, քանի վոր ուզած ժամանակ կարող են հպատակներից ամեն մեկին խփել և ուտել:

Վարուժանի տեսեալ բազմորդի զլոր՝ գոհանայր զաստուծոյ, և խնդակից նմա լինէր: Եւ ասէ լոր. Եթէ ճշմարտութեամբ գոհանաս, երանի է քեզ: Եւ անդէն եհար դմի ի ձաշուց նորա՝ և ըմբռնեաց: Ասէ լորն. Ահա յայտ եղև, զի ոչ վասն աստուծոյ գոհանայիր, այլ վասն ապահութեան:

Յայտնէ առակս զբարս իշխանաց, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկելոց ընդ յաջողուածն, ինքեանց վարկանելով զնոցայն՝ քան թէ ստացողացն:

Մխ. ձժէ. 99.

Իշխանները, վոր գողերին պատժում են, իրենք ավազակութեամբ ուղղութեամբ են պարապում:

Գող զորքէ ըմբռնեաց առիւծ. և նա ասէ. Զմեռեալս ուտեմ, զի կենդանեաց ոչ յաղթեմ, իսկ զու զի յաղթող ես՝ անդանդալ զայդ գործեալ:

Զբանակալ իշխանս առակս բամբասէ. զի զգոցս պատժեն, և ինքեանք բռնակալութեամբ զնոյն գործեն, ըստ յանդիմանութեան առաքելոյ:

Մխ. ԴԳ. 82.

Ո՞վքեր են այդ պատժվող գողերը. — միայն հասարակ ժողովուրդը: Իշխաններն ինչքան ևլ գողութիւնն ու զրկանք անեն, չարիքներ գործեն, նրանց համար դատ ու դատաստան չկա: Դատվողն ու պատժվողը միայն ժողովուրդն և: Ահա ձեզ Վարդանա առակներից մեկը.

Թէ Ո՞վ է ԻՇԽԱՆ ԴԱՏԵԼ.

Էր մեծ վանք մի. և հայր վանացն բարէկենդանին .Գ. աղք ժողով արար և յեա ի յեա տուն ձերոցն ի յեա և երիտասարդացն ի յեա և տղայոց ի յեա. և արար պատրաստութիւն և դնաց ի մէջ զիշխերին եկն տեսանել, թէ զինչ պակասեալ է, որ բերէ: Եւ եկեալ յերդիսն ձերոցն և ետես. և դնաց ի բերել զպիտուս նոցա: Եւ եկեալ յերդիսն երիտասարդացն և դնաց ի բերել զպիտուս նոցա: Եւ դնաց յերդիս տղայոցն ետես, զի զբեալ էին. Ա. վարդապետ ի տղայոցն և Ա. կաթողիկոս. և Ա. եպիսկոպոս. և Ա. երէց. և Ա. սարկաւակ և այլն ժողովուրդը: Եւ հայրն միտ դնէր: Եւ ըմբռնեցին զմէկ աշխարհակայն ի մեղս և բերին առ սարկաւակն. և սարկաւակն ասաց, թէ՛ Նրէցն աստ է և քան զիս մեծ է և ունի իշխանութիւն: Եւ նայ տարէք: Եւ սարկն: Եւ երէցն ասաց, թէ՛ Կաթողիկոսն աստ է, առ նայ տարէք: Եւ սարկն: Եւ եպիսկոպոսն ասաց, թէ՛ Սարկաւակն աստ է, առ նայ տարէք: Եւ սարկն: Եւ կաթողիկոսն ասաց, Վարդապետն աստ է. առ նայ տարէք: Եւ սարկն: Եւ վարդապետն եղանակս և արժանացուց աղաշխարութեամբ: Եւ յորժամ զիշխանաւորքն ըմբռնեցին ի մեղս, իողովորէրն ասաց, թէ՛ Ժողովուրդն չէ պարտ, որ զիշխանաւորս դատէ. զի ասեն զիրք ստուածայինք, թէ՛ Մարդ ամենայն, որ ընդ իշխանութեան՝ ի հնազանդութիւն կացցէ. մեզ ոչ է պարտ դատել. ինքն զիտ և Քրիստոս:

Սուրբանէ առակս, թէ ժողովրդեան չէ պարտ զիշխանաւորն դատէ. զի ամենայն իշխանաւոր աստուծոյ արհիւ ծառայ է. և Քրիստոս հրամայէ, թէ՛ Դու սիւ ես, որ դատես զայլում ծառայ. և ամենայն զիրք աստուածայշուհոց զայս ասեն:

Առ. Վարդ. Բ. 164. 61է

Դատելու ամենամեծ իրավունքը, ինչպես կարելի չէ տեսնել, նույնիսկ կաթողիկոսից ավելի, պատկանում և վարդապետին, այսինքն միջնադարյան գիտնականին: Բայց սա իրավունք ունի դատելու միայն ժողովրդին, այլ խարհականին, ռամկին: Իսկ յերբ իշխանավորն և հանցանք գործում, այդ ժամանակ իբր թե ինքը ժողովուրդն ասում և, թե ժողովուրդը չպետք է իշխանավորին դատի. «Զի ամենայն իշխանաւոր աստուծոյ արհիւ ծառայ է»: Բայց չի վոր հանցանքի մեջ բռնվել և այդ «ազնիւրը»:— Այն, բայց այդ չինքն գիտէ և Քրիստոս: Ուրեմն իշխանավորի դատը միայն աստված պիտի անի և վոչ ժողովուրդը, վոր իշխանության տակ լինելով, ասում և առակախոսը, պարտավոր և հնազանդ մնալ իր իշխանին, նույնիսկ յիժի նա զոդ ավագակ լինի:

Ի՞նչ պիտի լիներ զրա հետևանքով աշխատավորի դրությունը: Բերնից Վարդան Այգեկցու իրեն առակներէց մեկը.

ՄԵՇՄՏՈՒՆՔ ԵՒ ՄՇԱԿՔ, ԻՇԽԱՆՔ ԵՒ ՇՈՒՆՔ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ.

Եւ զարձակ այս չէ զարմացումն, ով ժողովուրդք աստուծոյ, թէ աստուած ի ձեռն մեղաւորի դայ մեղաւորս որդորէ՞ դառնալ առնալ յուսով ապաշխարութեանն: Եւ զայս վասն այնորիկ առնէ աստուած, զի տեսնէ մարդիւն և զնա փառաւորեսցնէ և ոչ զմարդն. որպէս և ցուցանեմ ձեզ յայտնապէս և պարզ աւերնակաւ:

...Եւ արդ՝ անա տեսնեմք զմեծատունն, որ ի ձեռն մշակաց դործեն և փռոյք պատեն և պահեն դայգիս և զգրախոս. եւ ի ժամ ճաշակման ողկուղիցն և պտղոցն ոչ զմշական յիշեն և ոչ զփուշն, այլ տանուտետուն շնորհակալ լինին. և նմա՞ կեանք և խաղաղական հայցեն յաստուծոյ նշնպէս և փառազարդ մեծամեծ իշխանքն ի ձեռն շանց և գիշակեր թռչնոցն որսան գիւրէն և զթռչունսն: Իսկ յ ժամ ճաշակման պարտաւ և անուշահամ մտոյն ոչ զըռնան յիշեն և ոչ զթռչունսն, այլ իշխանին լինին շնորհակալ, և յաստուծոյ խնդրեն յերկար ժամանակաւ յարել նմա զիշխանութիւն:

Առ. Վարդ. Գ. 77. Ե.

Այսպես ուրեմն այն աստիճան ընկած և մոռացության և արված աշխատավոր շինական դասը, որ իշխանների համար գործող մշակները հավասարվում են այն շներին ու գիշատիչ թռչուններին, վորոնց միջոցով իշխանները վորս են անում: Վայելում են իշխաններն աշխատավորի ձեռքի արդյունքը, և աշխատավորը մնում և քաղցած: Վարդան Այգեկցին այդ պատմում և իբրև մի սովորական հանրածանոթ յերեւոյթի: Ուրիշ տեղ սակայն («Վասն զրկանաց») նա պաշտպանել և աշխատավորի իրավունքը պետք է սարսափներով զարնուրեցնելով մշակի վարձը կտրողներին: Սոցիալական խնդիրներ, սակայն, նա չի հարուցանում: Բայց արդյոք կյանքի մեջ չկային դրանք:

Տեսնենք Մխիթար Գոշի առաջին առակը:

Աստուած յառնելն երբեմն զարարածս՝ երկեաւ. հակառակիլ. և խառնեաց զծանրն ընդ թեթեւին, զտկարն ընդ հզօրին. զի թէ հակառակ զարծիւն՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին:

Պրատէ առակս զԹագաւորս՝ կարգել զմեծամեծս և զնուաաստ ընդդէմ միմեանց. զի մի ընդ Թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեսցին:

ՄՆ. Ա. 5.

Հատ այս առակի, Թագավորի կառավարության սխտեմն այն է, վոր նա «մեծամեծներին ու նվաստներին» իրար հետ կովեցնում և, վորպեսզի իր դեմ չեղնեն: Յեղ վարչության այս յեղանակը մի անհրաժեշտություն է համարում Թագավորական իշխանության գաղափարախոս և մեծ իշխանների անձնական բարեկամ Մխիթարը, վոր խրատում և այդպես վարվել նա մինչև անգամ աստուած անուշով սրբազործում և այդ, պատճառարանելով, թե աստված ինքն էլ այդպես և վարվել արարչագործության ժամանակ:

Այսպես ուրեմն, իրար դեմ հանել «մեծամեծներին և նվաստներին»: Բայց սովոր են դրանք:

«Մեծամեծքն» աղնավականներն են, ազատները, իսկ «նուաաստքը» — վոչ աղնավականները, անազատները, կամ «վար, ցած, խոնարհած, յետին, տառապեալ, չնչին, խեղճ» մարդիկը, ինչպես բացատրված է այդ բառը Հայկազնյան լեզվի Առձեռն բառարանի մեջ: Թե այս բացատրությունը ճիշտ է, յերևում է Մ. Սորենացու Հայոց Պատմության մի հատվածից (Ա. դ. ԻԳ.). այստեղ պատմագիրը յերգիչներէց առնելով զծագրում և թագավորի գաղափարական տեսլը, վորի համար ի միջի այլոց ասում է. «Ոչ ընդ լաւագոյնսն խանդայր և ոչ զնուաաստն արհամարհէր»: «Լաւագոյնքն» աղնավականներն են: Մ. Սորենացու ձեռագիրների Ա. խմբի մեջ*) «զնուաաստն» բառի փոխանակ կա «զստրուկան»: Կը նշանակե՞ հին ժամանակ նուաաս և ստրուկ բառերը հասկացված են իբրև համանիշ: Այդպես «նուաաս» կոչվել և ռամիկը, հասարակ աշխատավոր դասը, ինչպես այժմ էլ կոչում ենք վերին կամ բարձր դասակարգ և ստորին կամ ցածր դասակարգ:

Մխիթար Գոշը, ուրեմն, խրատում և, վոր Թագավորն աղնավականներին ու հասարակ, աշխատավոր ժողովրդին իրար դեմ հանի, վորպեսզի չկարողանան թագավորի իրեն դեմ յեղնել: Մի անգամ վոր Առակագիրն այդ և բարոզում, նշանակում է իրականության մեջ գոյություն և ունեցել այդ կռիվը, դասակարգային պայքարը, և հենց այդ է պատճառը, վոր Մխիթարը հանդես գալով իբրև թագավորական իշխանության գաղափարախոս՝ ամենից առաջ, իր առաջին առակի մեջ հենց այն հոգացողությունն ունի, վոր հեղափոխական շարժումն ուղղված չլինի թագավորի դեմ:

Կան արդյոք այդ շարժումը:

Դասակարգային պայքարը տեղի չէ ունենում այն ժամանակ, յերբ ճնշված, հարստահարված դասը գիտակցում է իր դրության վատթարությունն և իր շահերի հակադրությունը ճնշողներին ու հարստահարողներին դիմաց: Յեղ Մխիթարի առակների մեջ տեսնում ենք, վոր ռամիկը շատ

*) Մ. Սորենացու Հայոց Պատմության ձեռագիրները հնագույն ժամանակներից բաժանվում են լեզու խմբի Տես Մոսիսի Սորենացու Պատմութիւն Հայոց» աշխատությամբ Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս. 1913:

լավ գիտե իր տառապաղին զբուժյունը: Նա գիտե, վոր տերերն իրեն տանջում են, կաշին քերթում են վոչ միայն կենդանի ժամանակ, այլ և մեռնելուց հետո: Առախ և նա ստիպված է թագնվել տերերից:

Մեղադիր եղեն ոմանք կզրու, եթէ զեմրդ ի ջուր յաճախ զեղբրիս եւ ասաց. Զի ոչ շատանս զերկուորիս առ կենօք աճուր, այլ և մահուամբ մերկ ի մորթոյ աճենս
Զչարաց տերանց առակս ազգէ. զի կենօք տանջի և մահուամբ
Մի. ԴԶ. 83.

Աշխատավորն իր տերերից վոչ մի լավ բան չի սպասում. մինչև անգամ Առակխոսը խրատում և, թե պետք է զգուշ լինել տերերից, զի նրանց բարքն այնպիսի չէ, վոր նույնիսկ «բազցը» տերերը միշտ ել բարի չեն:

Հաւ ընտանի յբժեռնել ստացողին իւրոյ, յոժ ազգակէր. և ոմանք մեղադիր լինին, եթէ զմէ վայրապար կսիչս ամբանատ Որոց ասաց, թէ՛ Զարնուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբռնէ. զի երբեմն գլխիվար կախէ, և բազում աւուր ճանապարհ տանի. և երբեմն ի վերայ կայծականց խորովէ և ուտէ:
Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է յամենայն ժամու բարի ի նոցանէ զամենի, թէպէտ և բազցը իցեն. այլ երբեմն և շարի ակն ունիլ արժան է, և զդատտ կեալ, և պատրաստութեամբ վարիլ քնդ նոսա:
Մի. ձին. 106.

Սեղծ մարդիկը տառապում են իրենց չքավորութեան մեջ և մինչ մտածում են իրենց դառն զրուծյունը թեթևացնել, իշխաններն ու բռնակալ թագավորներն ավելի ևս տանջում են նրանց կռու ու բեկարով և կողոպտելով: Կարգանք «աղօթի աղօթի» առակը:

Այր մի աղքատ երթար ի քաղաք մի. ի ճանապարհին հիւանդացաւ և ազաչէր դատուած պատրաստել նմայ զբոստ ամենի ի շէնն. և ա՛յ այ գայ օմն չարայբարոյ՝ հարկանէր զնայ: Արի յոտն, առէ, և յալիէ զբուռակս. զի ոչ կարէ դալ զհետ մաւրն իւրոյ: Եւ յարիտ և յար զանոնայպէս. զի ոչ կարէր կանկնել. և այրն չարայբարոյ ոչ զտղարէր ի հարկանելոյ զնայ: Եւ նայ տաէ. Վայ ինձ, աստուած իմ, փոխանակ թեթեացուցանելոյ ծանդրացուցիւր զվիշտ:
Յուցանէ առակս, թէ աղքատքն տառապին վասն չքաւորութեան և խնդրեն ինչք և ստացուածք ի յաստուծոյ. և թագաւորքն և բռնաւորքն, զինչ ունի, զան ալ կողոպտեն և թախենս:
Առ. Վարդ. Բ, 196, ձԿԵ.

Մարդիկ արդեն սկսել են գիտել սոցիալական անհավասար զրուծյունը և մտածել զրա մասին: Զրկանք կրողները դասակարգային պիտակցութեան գալով, բնականաբար արանջում ու զանգատվում են իրենց վիճակից և ասածուց, վոր հավասար չի տեսել մարդկանց, ինչպես վոր Ֆրիդրիխ իր բնաստեղծութունները մեջ զանգատվում և, թե ինչու պետք է՝

Մէկն ի պատոնց պարոնորդի,
Մէկն ի հարանց մութոյ լինի.
Մէկին հազար ձի ու շորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի, և այլն:
Առակների մեջ ևս «հանդգնում են» խոսել իշխանների դեմ, քննում

են նրանց գործերը, դատում են և շատ չարքերի պատճառը նրանց համարում («Դատիչք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց զնեն նոցա»): Այս արդեն հեղափոխական մտքեր են, իսկ «հեղափոխական մտքերի գոյությունը վորոչ զարարչանում՝ յենթադրում և արդեն հեղափոխական դասակարգի գոյությունը»: Կարգանք այս առակը:

Տրտունջ եղև տնկոց ամենեցուն զթագաւորէն իւրեանց, թէ առայօք բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ. զի զոմանս ի տունս բնակեցոյց՝ վորպէս զնորինջ, և զոմանս ի բուրստանս, և զոմանս յալքիստանս՝ և պատուին ի մարդկանէ, և զոմանս ի բրբու զանարգոս ի վայրի զպտղաբերս, որ և կերակուր լինին խոզից և կոխան գազանաց, և զայլս յանտառս՝ որպէս զմայրս, զսարդի և զնոճի և որ նման սոցին, զոր հարկանն անխնայ, և տնարգ քարչանօք ի շինուածս և յայրումն պատրաստեն: Եւ նորս լուեակ կոչեաց զնոսա, և աստեալ ի վերայ նոցա առէ. Ո՛չ զիտէք, եթէ զխորհուրդ թագաւորին ոչ ամենեքեան գիտեն, որպէս և ոչ զաստուծոյն. և թէ այլ ևս յանդգնիք, մեծաբոյն ունիք պատուհասիլ: Եւ զարհուրեալք լսեցին: Հանձարեզս զմեզ լինել կամի առակս, և հնազանդս աստուծոյ և թագաւորաց, և ոչ տրտնջիլ զանձառ խնամոցն աստուծոյ, և ոչ զձաձուկ խորհրդոց թագաւորաց, այլ իւրաքանչիւր գործոյ ուչ ունել: Զի ոչ եթէ վայրապար ինչ եղև կարգիլ ի թագաւորէն տնկոց զնոսա, որպէս և ոչ աստուած և ոչ թագաւորք անօրինն վայրապար. զի զոմանս յալքիս կարգեաց ի պտղաբերաց, և զոմանս ի բուրստանս, և զոմանս զհամացեղս յանտառս, այսպիսի պատճառաւ զի զազանաց և անանոց կերակուր լինիցին, և մի նեղեցին զմարդիկ զտածեալս ի նոցանէ՝ ուտելովս. և թէ ի տունս ոմանք տնկեցան, անուտելիք մանաւանդ են, ուտաի համարին մարդիկ լինել ի դրօսանս տեսնան և ի բուրումն, զի կերակուր է բարնոցաց բուրումն, և տեսնան ի զուարճացումն՝ որպէս բուրաստանք. նա և ի բժշկութիւն եւս: Եւ այլ թէ անտառք ի շինուածս և յայրումն պատշաճեցան, և այս նախախնամաբար, զի մի լինի՝ որ զպտղաբերս հարկանիցին ի շինուածս և յայրումն Այսպիսի և աստուծոյն սնօրինի և թագաւորաց զանխուլ և անքննելի դատաստանաւ, և թէ որ յանդգնի անկարգաբար ասել, դատապարտի:
Մի. Ի. 21.

Առակխոսը փորձում է «այրվողներին» արտունջը բացնել և քարոզում է հնազանդություն աստուծուն և թագավորներին և նույն իսկ դատապարտում ու սպառնում է իշխանների դեմ տրտնջողներին: Կարգանք հետևյալ առակը.

Կարգեցաւ հրամանատար և ի թագաւորէն բուսոց ճակընդիլ ի վերայ բանջարոց իրբու զտեսող յամարայնի ի կերակուր մարդկանս Եւ խանդացեալ սին և ձմերուկ, և այլ պտուղք բանջարաց և պարտիզաց՝ թաղթ և շողգամ և սակպղին, և սկսան չարախօսել եթէ սասախի ամենեւին է, և որչոյ որովայնի: Եւ գիտացեալ արքայի նոցա, տանջիլ զնոսա հրամայեաց, եթէ զի յանդգնիք ընդդէմ իշխանի, զի հնազանդել պարտիք, և ոչ քննիչք լինել, զի մի անկարգութիւն լիցիլ:
Ճածուցանէ առակս զյանդգնութիւն մարդկան, որ դատիչք լինին վարուց իշխանաց, և բազում պատճառս չարեաց զնեն նոցա. և ոչ իմանան՝ թէ այնքերէք լուծանին կարգք իշխանութեանն՝ մինչեւ ի բնախիցն ժամանէ իշխանն աստուածս:
Մի. Ծ. 51.

Տրտնջացողներին ուրեմն տանջում են, վորովհետև վոչ վոք չպիտի հանդգնի իշխանի դեմ: «Զի հնազանդել պարտիք և ոչ քննիչք լինել, զի մի անկարգութիւն լիցիլ»: Այդ քննությունը, ինչպես յերևում է Առակխոսի վերջին նախադասությունից, «հասած է յեղել մինչև ամենաքի իշխան աստուծուն» Բողոքողները յերբեմն թագավորի սաստեղուց զարհուրած՝ լուում են:

Բայց մի անգամ վոր մարդիկ սկսել են տրանջալ իրենց վիճակից, այլևս հնարավոր չէ լոկ խոսք ու խրատով լուեցնել և հնազանդեցնել բողոքողներին: Դասակարգային կռիվն սկսված է իշխանների ու նրանց բռնութան յինթակա գյուղացիների միջև և առակագիր վարդապետը, վոր էր կոչվումով իրրև դատավոր՝ իբր մեջնորդ և յերկու դասակարգերի՝ ազնվականութան և շինականութան միջև, ստեղծված է առերես դռն ամեն մեկին էր տեղն ու արժեքը առ և քարոզել, թե՛ «ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից» (Մխ. է. 10): «Բնաւից կարօտ լինել մեծամեծաց և փոքունց առակս ցուցանէ, ոչ միայն թագաւորաց, այլ ամեանեցուն՝ իշխանաց և այլոց աշխարհականաց. նմանապէս և յեկեղեցիս. զի պէտս ունին փոքունց և անարգաց» (Մխ. ՃԺԳ. 96):

Բայց զրանով բնավ չի բարվոքվում աշխատավորի վիճակը: Ինչ միութարութուն աշխատավորի համար, թե իշխող և իշխված դասակարգերն ել պետք են և իրենց արժեքն ունին աշխարհում, քանի վոր նրան կարգել են ինչպես «զմայրս ի շինուածս, զանտառն յայրուծմս». քանի վոր նա աշխատում է, և ուրիշները վայելում են, իսկ ինքը միայն «այրվում է»: Այդ տանջվողները, մաշկվողները, ինչպես տեսանք, թաք են կենում իշխաններից և նույն իսկ մտածում են. «Ելլցուք և մի դարձցուք առ նոսա». ճիշտ ինչպես մեր ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» մեջ*) իշխանից զժգոճ ժողովուրդն ուղում է թողնել հեռանալ իշխանի յերկրից:

Եղև երբեմն արտունջ անդէոց, թէ՛ Վասն ծննդոց մեր աշխատիմք, և ստեղծք ժողովմք կաթն, և մարդիկ ճմլեալ զպտուռնս՝ առնուն ի մէջ զվատակս մեր՝ ելլուք և այլ մի դարձցուք առ նոսա եւ. մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպես. զի զաւելորդսն քան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ, և խնամեն մարդիկ զմեզ և զծնունդս մեր, զի առնումք շատ՝ քան թէ տամք: Եւ ուսեալք զսյս՝ ուրախ եղևն:

Սրտտէ առակս զբրթմնջող սպասաւորս, որք շատ կարծեն զինքեանցն քան զտերանցն զոր առնուն, այլ ուսեալք յիմաստնոց զխան՝ զի սակաւ է ինքեանցն:

Մն. 2. 73.

Առակակախոսը փորձում է, ուրեմն, ուրիշ կերպ համոզել բողոքողներին: Աշխատավորները չպետք է տրտնջան, թե իշխանները նրանց աշխատանքը վայելում են, զի ազնվականները իբր նրանց աշխատանքի ավելորդ մասն են միայն առնում և զբա փոխանակ խնամք են տանում, պահպանում են նրանց:

Առակախոսը ձգտում է նույնիսկ համոզելու, թե իբր տերերի տվածը կամ կատարածն ավելի շատ է, քան առածը: Աշխատավորներն «իմաստուններից», այսինքն՝ հողերականներից իմանալով այդ, հանգստանում են միառժամանակ և նույն իսկ ուրախանում են միամտութեամբ: Բայց զրանով չի վերջանում դասակարգային պայքարը:

Ինչքան ել աշխատավորները տգետ լինելին, պիտի տեսնելին, վոր

*) Մեր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը, ինչ վոր պատմականին և վերաբերում էր վերջնական հորինվածքն ստանում է մինչև 13-րդ դարի կեսերը: Տես Մ. Աբեղյանի, Հայ ժող. վեպը, Թիֆլիս, 1908. այլ և Ազգագրակ. հանդես, զբեր 13—17, 1906—1908:

կան շատ իշխաններ, վորոնք աշխատողներից կերակրվում են, բայց իրենց հարկատուներին վոչ խնայում են և վոչ պահպանում դայիբրի ու գազանների դեմ, այլ, ընդհակառակն, իրենք դայլ գարձած տանջում են նրանց, կամ ինչպես Ծրբիչն ասածուն զիմելով՝ ասում է.

Իշխան զբեր ևս մէկ մէկի,
Քան զքանտար դայլ ոչխարի...

Կարգանք Մխթարի հետևյալ առակը.

Բեկեալ առիւծու ոտք՝ արտնջեր զբնու կենդանեաց, եթէ՛ Հարկատուք իմ էք, զի իշխան գազանաց եմ. ընդէ՛ր այժմ ոչ պատարագիք՝ զի դարմանեցայց: Եւ ասն. Զի ի քէն ինչ ոչ դուք պահպանութիւն՝ ոչ յարջոյ և ոչ ի դայլոյ և ոչ յայլ ինչ գազանէ. նա և ոչ զու իսկ ի մեզ խնայեցեր. այլ մեզ պատարագել ասուածոյ արժան է, որ այդպիսի չարեաց զքեզ պատանեցոյց:

Յայտնի է առակիս միտք. զի չարք յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց՝ ասնջելով զհնազանդեալարն և ոչ յայլոց պահն ի վտանգէ: Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ ասուածոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէջ եղև:

Մխ. 26. 76.

Իշխանները փորձում են մի ուրիշ կերպ ել արգարանալ:

Թռչունք առ հասարակ զգազակ բարձրն, եթէ՛ Զար է իշխանս մեր արծիւ, զի միշտ ի մէջ կերակրի՝ և յայլոց որսողաց ոչ պահէ: Եւ լուեալ ասաց, եթէ՛ Զինչ քան զայն ձեզ բարի, զի երկու ծնանիմ որդի՝ և զմընն ապականեմ, զի մի ծանր ձեզ եղէց. և մերձ լինելով իմ՝ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք:

Ըստ առակիս սովոր են առնել թագաւորք ամենայն. առ իւրեանս ունել որդի՝ ժառանգ թագաւորութեան, զի մի պատճառ կործանման իցեն յաշխարհի. և ի մերձ կեալն նոցա՝ չիշխէ ոք զորժել չար:

Մխ. ՃԺԳ. 97.

Զեզ համար դրանից ավելի ինչ լավ բան կա,—ասում են թագավորներն աշխատավորներին,—վոր յերկու վորդի յիմ ծնում, բայց մեկին սպանում եմ, վորպեսզի ձեզ վրա չծանրանամ: Այն, վոր արևելյան թագավորներն իրենց վորդիներին, բացի թագաժառանգից, կոտորել էյին տալիս կամ հեռացնում իրենցից, Առակախոսը բացատրում է, ուրեմն, իբրև թագավորի բարեհոգութեան նշան, վորպեսզի իբր «չծանրանա» աշխատավորներ լրա, և կամ աշխարհի կործանման պատճառ չդառնա: Բայց ուրիշների և հայ Արշակունյաց այդ սովորութեանից վոչ վոք չեք խաբվիլ ի հարկէ, ուստի նույն առակի մեջ ավելանում է նաև հետևյալը. «Եւ մերձ լինելով իմ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք»: Կը նշանակե, թագավորը կամ իշխանն իրավունք ունի վայելելու աշխատավորի վատակը. բավական է միայն, վոր նրա հովանու տակ ապրելով՝ այդ աշխատավորն ուրիշներից այլևս չի կեղեքվում. «Ի մերձ կեալն նոցա՝ չիշխէ ոք գործել չար» (Մխ. ՃԺԳ. 97), ասում է Առակախոսը: Եւ յեթե այդպես չի լինում, յեթե ուրիշներն ել կեղեքում են, զբա մեղքն իբրև թե իշխանինը չի: Բայց արդյոք հավատում են դրան: Աշխատավորները բողոքում են. «Զար է իշխանս մեր... զի միշտ ի մէջ կերակրի և յայլոց որսողաց ոչ պահէ»:

Այդ չար իշխանն անա, ինչպես վերևում բերված Ձե առակի մեջ, մի որ թուլանում, ընկնում է, և հպատակներն ընդզգեղով նրա դեմ, հնարավոր են գտնում հարկ չտալ. ուստի և դադարեցնում են հարկատվութունը: Վորք կողմը պիտի լինի այժմ Առակախոս Մխիթարի համակրութունը: Նա գոհ է, վոր ընկնում են այդպիսի չար ու ասնջող իշխանները, լինին «յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց»: Բայց և այնպես նա ավելի ևս գոհ է, վոր չար իշխանները ժողովրդի ձեռքով չեն, վոր պատժվում են. «Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք, զի ոչ ի մէնջ եղև» (Մխ. Ձե 76): Ուրեմն դարձալ նա չի մոռանում իր դասակարգը և չի ուզում, վոր աշխատավորի ձեռքով պատժվի չար իշխանը: Նույնը նաև Վարդանա առակների մեջ (Գ. ԽԼ, յեր. 107): Յեղ վոչ միայն այդ, Ազնվականութեան դադարաբախտը, հակառակ ժողովրդական առածի, թե՛ «բեղ կանգնի, գերան կը կոտրի», խրատում է, թե տկարները, ինչքան ել թվով շատ լինեն և միաբան, չեն կարող հզորին հաղթել, և թե խելքութուն կը լինի, վոր այդ ապստամբ տկարներն իրենց ուժը համեմատաբար պակաս ուժեղի, այսինքն՝ յերկրորդական իշխանների դեմ փորձեն:

Ժողովակը կրքեմն աստեղաց՝ ասեն ի նոցանէ ծերագոյնքն, Մեք բազումք եմք, զիսորդ զտիւ և զըլիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի: Ատէ ոմն. Ձի ոչ միաբանութեամբ վարեմք: Եւ խոնարհալ միաբանութեամբ նախ հերքել զարեգակն, և ի ծաղիլ լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս ի սմանէ աղօտացաք, զի՛նչ և յարեգական ծաղիկ լիցուք: Եւ զըղջացեալ զպարտութիւն խոտտովանեցան:

Որտեղ առակս, թեպետ և բազումք իցին՝ և տկարք, հզորի յաղթել ոչ կարեն. իմաստութիւն է՝ այլ եւս տկարիւ գիտրձ ասնու՛լ՝ և զղջանալ. որ և թողութեան է արժանաւոր

Մխ. Ե. 7.

Մխիթարն ինչքան ել մի կողմից տկարներին խրատում և չապրատամբել հզորներին դեմ, մյուս կողմից սակայն հզորներին ել զգուշացնում և տկարներէց:

Ջրոյն մըջեան արջ փորէր և լեզուաւ ժողովեր և ուտէր. և հնարի մըջիւն սատակել զնա. կրթեալ առ պիծակ և գոռիս և մծնիս և շանաճանձ և բրէտ և առ նմանք սոցին. և աղաչէ օգնել իբր աղաչին՝ ծախեցեն՝ հարկանեն զաչս և զլեւիտ արջուն, և հարկանէ գրուի զբարի, և նեխի և որդունք եւս ծնանին. և ի սաստկութենէ ցաւոց զբերան բացեալ զոչէր ևւ նոցա մտեալ յորովայնի՝ խոցոտեն զաղինս. և նեղեալ զիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքո մտեալ՝ հեղձանի:

Ջորութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արձամարհեն, և ոչ կրկնչին սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզօրաց: Եւ այս իմաստութիւն է ի փոքունց իբրև ի մեծամեծաց կրկնչիլ:

Մխ. ձՄԳ. 124

Բոլոր իշխաններն ել չար չեն ըստ Մխիթարի. կան և այնպիսիները, վորոնք իրենց բերդերի մոտ տեղ են ապլիս ժողովրդին ապրելու և իբրև կալոյ պաշտպանում են նրան ավազակներից ու ասպատակավորներից: Յեղ այս անում են նրանք իբր մի բարեգործութուն, իբր մի բարեպաշտական գործ, վշտակցելով տկարներին և փոխարենն իբր թե միայն աղոթք ու մաղթանք ստանալով իրենց վողջութեան և հոգու փրկութեան համար:

Սրամ հընճողու կրթեալ առ արաղիլ, և աղաչեալ զնա ասեն. Ի բոյն քոյ տեղի մեղ սացես հանել ձագս, և յօձից զձագ մեր պահեսցես: Եւ նա ասէ. Ձի՛նչ ինձ անիցէք, զի դայդ ձեզ անիցեմ: Եւ ասեն. Աղօթս անենք, զի ձագք ձեր ատոզութեամբ սնանիցին ի վնասակարութենէ օդոյ, և ի հանդերձեալսն կենաց արժանի լինիք յազապս արգարութեան ձեր: Եւ յաղապս այսորբի տեղի ես նոցա: Եւ կղեւ ի հանել նոցա ձագ, սողաց օձ անու: Ի նոցանէ, և տեսեալ տառեղան՝ ենար սաստակեաց դօձն. և օրջէր եւս շուրջ ի սահմանսը միանգամայն սատակել դօձն յազապս փրկութեան նոցա:

Ձվշտակցութիւն ասակա ուսուցանէ տկարաց՝ յերկաքանչիւրսն վայելել փրկութիւն՝ սակա բարեգործութեան նոցա:

Մխ. ձԻԲ. 103.

Վարդանա առակների մեջ, սակայն, այդ պաշտպանութունը չկա: Մխիթարի այդ առակն այնտեղ փոխվել է այնպես, վոր իշխանն այլևս չի պաշտպանում իր հովանուն ապաստանող ժողովրդին, այլ միայն իր զվարճութունն և անում. նա ժողովրդին խաբում է, ըստ առակի առասպելին, իբրև թե ոգնել չի կարողանում նրան, թեպետ կամենում է:

Մանր բոչունց յեղ առազիլ:

Ժողովեցան մանր թռչունքն և աղաչեցին զարաքին, զի զիցեն զբոյնս իւրեանց ի ներքոյ բնին արաքիլ: Եւ եկեալ աւժքն բնակեցան ի խոխոն, զոր կուտեալ էր արաքիլն ի բունն իւր: Եւ սկսան քարոզել զնորածին ձագսն մանր թռչնոցն: Եւ արաքիլն ունի ստոբութիւն, որ տանի զգլուխն յետ ի վերայ թիկանցն և զկտուցն կլկլիցնէ իբրև զձնձղայս, և կարծէին մանրաձագերն, թէ ապաշօէ (ապաշաւէլ խղձուլ, ափսոսող, ցափել) զմեզ. և ասէին առ նա, թէ՛ Ծատ շնորհակալ եմք քեզ. զի թէպէտ և աւգնել ոչ կարես, արտմակից լինիս մեզ:

Նշանակէ առակս, թէ թագաւոր ոմն կամ իրեան ոչ կարէ աւգնել ժողովրդեանն և պահել ի թշնամեաց. այլ զհարկն յաւելորդ պահանջն աղքատացն և ինքեանք փափկանան. նոյնպէս և հոգեոր առաջնորդքն, զի խնամ ոչ տանին հօտին և ոչ հոգան զբորոտն զհիւանդացեալսն մեղօր, այլ զզէրն զենն և հարսիլն պարարտանա:

Առ Վարդ. Բ. 198. ձԿԵ.

Ըստ առակի խրատական մասի, ժողովուրդն արդեն զխտե, վոր աչնրվականութունն այլևս անպետք է և ավելորդ է և զուր ծանրաբեւոնութուն: Նա միայն փափկանում և իր անձն և պարարում: Այսպէս և հոգեվորականութունը:

Բայց այդ չն միայն:

Վարդանա առակների մեջ, վորոնք ժամանակով ավելի ուշ են, աշխատավոր շինականի այս դասակարգային պայքարն ընդդեմ ազնվականի՝ մի փոքր ավելի յե շարունակվում: Աշխատավորն այնտեղ արդեն կատարելապես գիտակցում է իր արժեքը, իր շահերի հակադրութունն իշխանների դիմաց: Նա ըստ արժանույն գնահատում է այն թագավորներին, իշխաններին ու պարոններին, վորոնք վտակով ու արծաթով զարդարուն ձիերի վրա բազմած ման են գալիս և ապրում են աշխատանքով մշակի, վոր չարչարվում և հողնում է աշխարհը շին պահելու համար: Ուտում են իշխանները և յերախտամոռ լինում. հեծնում են ձի և միայն աշխարհ ավերում:

«Եզն յեղ ձի»

Եզն և ձին խառնեցան ընդ միմեանս: Ասաց ձին ընդ կզն, թէ՛ Դու ձի ես կամ զինչ պէտս ես: Ատէ. ես ձի եմ, որ թագաւորք և իշխանք և պարոնացք կազմեն զիս սոկով և ար-

ձաթով և բազմին ի վերայ լիմե Սեւե Եզն, Ամէն աշխարհիս շէն եմ ես, որ վաստակիմ և շարչարիմ և խոնջիմ, և ապայ դու և քու թագաւորն ուտէք, և ամենայն ժարդ զվաստակիմ ուտեն, եւ թէ ոչ վաստակիմ, դու և քու թագաւորն մեկ հետ մեռանիք, և դու երախտայմուաց մի լինար:

Յուցանէ առակս, թէ մարդ կայ, որ աշխատի քան զեզն, և մարդ կայ, որ հոմատայդ դձի հեծնի ու աւեր անէ աշխարհի, և թէ աշխատաւորն ոչ աշխատի, որպէս զեզն. նայ մեռանի ձին և հեծնոյ նորա:

Առ. Վարդ. Բ. 151, ձեռն

Ազնվականն, ուրեմն, այլևս վոչ միայն անպետք է, այլ և պարասպորդ, ավերածու:

Այս գիտակցութիւնն այնուհետև մինչև այժմ ել մնում է մեր աշխատավոր ժողովրդի մեջ: Ինչքան ել իրականութեան համապատասխան է յեղել առածը, թե «եղը դատի, ձին ուտի», բայց և այնպես ժողովրդական առակը, վոր յես գրի յեմ առել 1885 թ. Աստապատ գյուղում*), ասում է.

- «Վոսկե թամբով ձին բեռնած յեզան տասվ.
- Յես ձի յամ ձիտվորին,
- Վոսկե աթոռ ամ թագավորին:
- Յեզն տասվ.
- Յես յեզն ամ յեզնավորին,
- Վոսկե աթոռ ամ ուրջավորին.
- Յես չզատեմ արան ու գարին,
- Ղառղառնին (ազնաջները) պոչիդ տակին կըարվին»:

Այսպես ուրեմն, վերջ ի վերջո աշխատավորը, յերկրագործ շինականն ավելի բարձր է դասվում, քան նրան կեղեքող ազնվականութիւնը: Յեւ այլպես ել չի կարող լինել, քանի վոր առակները տեսակը, ինչքան ել հոգևորականի ձեռով գրված, իր արմատներն ունեն աշխատավոր դասի մեջ և առակներն իսկպես նրա գրականութիւնն են: Հենց այդ պատճառով ել գրանց մեջ տեսնում ենք այն կարգը, վոր կեղեքված աշխատավորները վարում են ազնվականութեան դեմ:

*) Տպված է Տ. Նախատարգմանի «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի մեջ. յթերերդ գիրք, Թիֆլիս, 1891, յեր. 85.

Ավելորդ չի լինիլ այստեղ գրել և հետևալի մասին Հին Նախիջևանի մոտ գտնված այս Աստապատ գյուղում, վոր այժմ ավելի թաղապետ են անվանում, նույն 1885 թ. տեղի յի ունենում արքարային շարժում: Գյուղի հողերի սեփականատերերն իրենք գյուղացիներն են յեղել պարսից ժամանակ. բայց առաստի տիրապետութեան որով կառավարութիւնն այդ գյուղը կազմած է տալիս Նախիջևանի խաներին, վորոնք 30-ից 7-ը բարձր ելին առնում ամեն բանից: Գյուղացիք պարասպոր ելին խաների բաժինն ել կալուել և այլն և իրենց հաշվով փոխադրել Նախիջևան նրանց ամբարները: Գյուղում կար չափազանց մեծ սակավահողութիւն (1914 թ. գյուղի բնակիչները թիվը 5000-ից ավելի յեր): Կալվածատերերը վոչ մի բանով չեյին մասնակցում գյուղի հանրային կարիքներին: Յեւ ահա այդ կեղեքված գյուղացիները մի հողաշափի ազիտացիայով, ապաստարում են: Նրանք հավաքվելով յեղեղեցիները՝ յերդվում են վոչ մի բարձր չափ խաներին: Հետեանք սովորականն է լինում. կառավարութիւնն իսկույն հիսուն կողակ «եքզեկուցիա» յի դնում գյուղի վրա և 300-ից ավելի տղամարդ հավաքում լցնում Նախիջևանի բանաւր կողակները վեց ամիս մնում են գյուղում՝ ապրելով գյուղացիների հաշիւն և ամեն տեսակ անկարգութիւններ անելով: Բանաորիվածներն յերկց

Առակները լինելով ամենից ատաղ քաղաքացիական գրականութիւնը, բնականաբար, նույնիսկ Մխիթարի խմբագրութեամբ, իրենց նշուխն առնում են նաև քաղաքացիների կյանքից: Այսպես, որինակ, Մխիթար Գոշի տակները մեջ հանդես են գալիս առանձնապես արհեստավոր քաղաքացիները — հյուս, դարբին, կտավագործ, կարող (գերձակ), պղնձագործ, յերկաթագործ, արծաթագործ, վոսկեգործ, խաղախորդ (կաշեգործ), մորթեգործ, բրուտ, կոշիկակար, շինողութիւն: Բացի դրանցից, կան նաև անկազոր, վաճառական և այլն: Այս արհեստավոր մարդկանց մեջ տեսնում ենք մի խուլ մրցութիւն: Հաճախ վեճ է ծագում, թե վորի արհեստն է ավելի բարձր:

Այսպես, որինակ, Մխ. ՃԿԵ, 133, դարբնին առավելութիւնն է տրվում հյուսանից. ՃԿԵ 134, յերկաթագործը գերադաս է պղնձագործից:

Արքային Սոսոմոնի հանդերձ ոմն կարէք արուեստիւ սքանչելի է յոյժ ուրախացեալ պանծայր. և բեհեղազորն ընդդէմ զիւրն յարգէ արուեստ: Եւ լուեալ արքայի կոչեաց զնստ և ընտրեաց ի մէջ նոցա, թէ անկազմ է կառ տառնց կարողի. սակայն զո՞ կարէ արուեստիւն, եթէ չիցէ արարեալ կառ. զի և Ազամ դտերեւ եզիւս և արար հանդերձ: Եւ այսու առաջին ցուցաւ կտաւագործ քան զկարող:

Ամենայն ուրեք տակս անպարսու ցուցանէ զկտաւագործ, զոր բազումք այսպանն: Մխ. ՃԿԶ, 133.

Այս առակով կտավագործն ավելի բարձր է, քան կարողը, այսինքն՝ գերձակը: Շատերն այսպանում են կտավագործին, բայց թե նա վորքան գիտակցում է իր արհեստի արժեքը, այդ տեսնում ենք ներքևում գրված առակից՝ Տամբատեցի կտավագործի մասին:

Մտղրն ու այսպանումը տեսնում ենք և ուրիշների վերաբերմամբ. խաղախորդը մորթեգործին և այսպանում, և սա նրան (Մխ. ՃԿԹ, 135). ուրիշները կոշիկակարին (Մխ. ՃՃԱ, 136): Այս ցույց և տալիս տարբեր համբարութիւնների վերաբերմունքը միմյանց:

Տեսնենք մի ուրիշ կողմ — տարբեր վիճակների կամ դասերի հարաբերութիւնը: Այսպես Մխ. ՃԿԵ 132 առակի մեջ դարբնութիւնը, քաղաքացու արհեստը, նախամեծար է դասվում, քան յերկրագործութիւնը, շինականի պարասպունքը: Դա քաղքենիների կարծիքն է: Այդպես չի մտածում, սակայն, ինքն Առակխոս Մխիթարը. ամեն արհեստ ու պարասպունք, ժամանակին նայելով, կարող է ավելի մեծարելի լինել:

Ի թագաւորն ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց, և թագաւոր զանձն կոչէր, զի պատկեր եղև թագաւորի. և նովաւ ամբարտաւանէր գործոմն ևւս ի վերայ արծաթագործաց և այլոց. եւ ի գալն ամենեցուն՝ ոչ եկն ցորեան ասելով. Գամ, մինչև նախ ինձ եկեալ երկիր պաղանիցէ:

ամսից հետո արձակում են. բայց մի քանիսը բանտում մեռնում են, ուրիշներն այնտեղ հիվանդացած լինելով, դուրս գալուց հետո ջուտով մահանում են: Յեւ այդպես վերջանում է այդ ազգարային շարժումը:

Փոփոխելի առակն ցուցանել գնիւթականքս, զի ոչ մըշտ պատուին. զի յերբեմն մեծաբն ոմն, և երբեմն անպատուի. վասն բազում անգամ վտանգի սովոյն նիւթք ամենայն խոնարհին ընդ ձեռամբ ցորենայ: Եմանապէս և յայսն է տեսանել: Ըստ այսմ և յարուեստարս պատանի, որովք չէ պարտաւորաւորաւ:

Մխ. ձեմ. 134:

Վերջ ի վերջո ցորենը, ուրեմն դարձյալ յերկրագործ շինականն և, վոր չի յերկրպագում «Թագավորի պատկեր» վոսկուն և հպարտութեամբ պահանջում և, վոր իրեն գան յերկրպագին: Դա շինականի կարծիքն և: Քաղաքացիները կարծիքը սակայն այդպես չէ: Քաղաքի և գյուղի միջև տեսնում ենք մի խուլ պայքար, վորովհետև քաղաքի անասութեանն ուրիշ բնութեանն ունենք, քան գյուղիկը. քաղաքիկը նոր էր, արագ բարձրացող. գյուղիկը՝ հին, ընկած: «Ասպետն արեղայի և գյուղացու հետ միասին, — գրում և Կ. Կառլցկին, — հանդիսանում եր արտադրութեան հին ավատական յեղանակի ներկայացուցիչը: Այս յերեք վիճակներէց (գասերից) յուրաքանչյուրը ծառայում եր իրրե արձամարմանքի և ասեղութեան առարկա մեծ քաղաքների բնակիչներին համար... Քանի զեռ հեղափոխական եր մնում քաղաքացի բնակչութեանը, ... նա թշնամիներէ զեմ կոչում եր կատակներով ու ծաղրներով: Հիմար գեղջուկը, դատարկապորտ տերտերը, իր աղքատութեան մեջ հպարտ ասպետը սիրովս զործող անձերն են վերածնութեան և հաջորդ դարաշրջանների գրականութեան»*):

Այս միևնույնը գտնում ենք նաև հայոց գրականութեան մեջ 150—200 տարով ավելի վաղ, քան յեվրոպական գրականութեան մեջ**): Մխիթարի մի քանի առակներէ մեջ ծաղրվում են վոսկ միայն հոգևորականները, այլ և շինականները — մշակը, յերկրագործը, հողագործը: Մխ. ԾԳ. 54. «Զխստոր Գալիանոս՝ Թիւրակէ կոչէր շինականաց. եւ լուեալ մշակի միոյ, առեալ եկեր կայթիւ (= կողովով), և խելագարեալ կուրացաւ: Կամ հետեյալը. Մխ. ԾԳ. 54. «Եփեալ հողագործ ոք ի պարտեղէ իւրմէ զառիս բազում, կարծելով զնա բանջար, և անկաւ յորովայնածութեան ախտս»:

Կան առակներ, վորոնց մեջ ևս ծաղրվում են խելապես հիմար գեղջուկները, բայց Մխիթարն, ինչպես յերևում է, զգուշութեամբ, ընդհանուր ձևով «ոմն», «ոք» բառերով և պատմել: Այդպիսիներից են որինակ՝ Մխ. ԾԸ 56, ԿԱ 59 և ներքեում զրվածը: Վարդանա առակների մեջ կա զրա մի փոփոխակը, վորի մեջ մի մարդ քաղաք և գնում մի ել գնելու: Ուրեմն գյուղացի, վոր քաղաք և գնում: Դրա մի փոփոխակն ել յես գրի յեմ առել 1885 թ. Աստաղատ դյուղում: Այստեղ ծաղրվում են Դարաշամբի գյուղացիները, վորոնց վրա յին պատմում ամեն տեսակի զվարճալիքներ***): Առնենք այդ

*) К. Каутский. „Томас Мор и его утопия“. М. 1924, стр. 41 հա.
**) Տես Մ. Արեղյան. «Համառոտութեան հին գրականութեան պատմութեան». Յերևան 1923 թ. յեր. 42—61
***) Տ. Նավասարդյանց. Հայ ժողովրդ. հեքիաթներ, վեցերորդ գիրք, Թիֆլիս, 1890, յեր. 54—61:

յերեքն ել տեսնելու համար, թի ինչպես նույնը պատմութեմ և տարբեր ձևերով:

Յտես ի վաճառի անփորձ ոք զլաման, և հարցեալ որ մտան կային, թէ՛ Զինչ իցէց եւ գիտացեալ եթէ տղետ ոք է, ասեն, թէ՛ Զու է սիրամարդիս եւ նա հաւատարիմ կարծեա վասն նմանութեանն. և տարեալ եղ ի ներքոյ հաւու, զի ելցէ ձառ սիրամարդի. զոր առեալ եկեր հաւու եւ յետ աւուրց երթեալ ի տես, և պատահեալ անդ սկի իգնակ՝ թռեաւ և նորա նստեալ լայր, եթէ՛ Անժամ եղր, և անկատար գնաց ձագ սիրամարդին:

Զառակս այսպէս զիտեմք: զի յիմարաց գեղեցկութիւնն պատրոզ է՝ և հաւատարիմ գոութիւն կարծէ, այլ իմաստունք զիտեն, զի գեղեցկութիւնն անգոյ է, և զորութիւնն ճշմարիտ Մխ. Կ. 58

ՅԻՄԱՐ ՅԵՎ ԶՄԵՐՈՒԿ

Այր մի անմիտ և յիմար ունէր զանեկան մի և առեալ զայն գնաց ի քաղաքն գնել էջ մի. զըջեցաւ ի քաղաքն և ի շուկայն և ոչ գտաւ միոյ զանեկանի էջ: Եւ եկն կրկին ի շուկայն, ետես մեծ ձմերուկ մի և տէ հիւսցմամբ. Զինչ է այս: Եւ յիմացան վաճառականք, թէ յիմար է և ասեն թէ՛ Հնդի իշու ձու է և հանէ հնդացի իշու էջ մեծագոյն. Եւ նայ խնդարով ետ զգանեկան և էառ գնաւ Եւ պնդեցին գնա, թէ պատրաստ տար գձուս, որ չէ բեկի և էջն երեալ փախչի Եւ առեալ զձմերուկն սկսաւ գնալ զառ ի վար ճանապարհ. և ոտն նորա գայթակղեցաւ. և զերծաւ ի նմանէ ձմերուկն. և զյորեալ գնաց ի մէջ թաւ անտառին. և նապաստակ մի վաղեաց ի յանտառէն և սկսաւ փախչիլ Իսկ նայ կարծեաց, թէ բեկաւ ձուս և էջն երեալ փախչէր: Եւ ի հետ մտեալ ձայնէր նապաստակին. Այ էջ հնդացի, վայ ինձ, մի փախչի: Եւ ձայնէր. Քուսի՛, բուսի՛, ողորմեայ ինձ և դործիք առ տէրս քու:

Տուցանել առակս, թէ այսպէս յիմարեցան թաղաւորքն, քանանքն և ժողովուրդքն, և թափեցաք ամենքեան ի խելաց և ի մտաց և գնեա մտաք զուս և խաբող կինաց աշխարհիս ողորդի, որ նման հողմոյ և փաղչի ի մէջն և նման երազոյ պակասէ. և ջանամք բմբունել գնեաութիւն և գմեղս աշխարհիս և զարշիլ սիրով և ցանկութեամբ մեղավորեմք ի մեզս քշխարհիս և լինիմք ողորմելիք հոգով և մարմնով:

Առ. Վարդ. Բ. 105. 2թ.

Ահա զրա փոփոխակն ել իմ գրի առած:

Մին շամբբցի կ'ընի, վեր կը կենա, կը գնա Նախջվան. կը տեսա ձմերուկ ան ծառում, կ'ասի.

- Եզ ինչ ար ծախում: Կասեն.
- Ելէ ձմերանի յա, վոր ելի տակին թուխ գնես, բուսակ կը հանի:
- Շամբբցու բեյիկը կը մընի, երկուք կ'առնի, վեր կ'ունի, վոր գնա իրանց տունը: Կամփին ձմերուկին վեր կ'ընկնեն, կը կոտորին: Իրբիկալուց մըն քուլի տակին լպտորակը կը խնի, եղ ել կ'ընկնի յիննէն, կը կանչի հա.
- Զո՛ւ յես քո տերանին ամ. չո՛ւ յես քո տերանին ամ:
- Ին լպտորակը հո ել չի, վոր անկաջ գնի, կաղնի—կը փախի, կը հեռանա: Եղ շամբբն եր, մընեք կախ, կըզնա կըհաննի իրանց տունը, կ'սկանը կ'ասի.
- Ա՛ կ'սկի, գնացիմ Նախջվան, երկու ելի ձմերանի առամ, վոր բերեմ գնեմ մեր էլի տակին, բուսակ հաներ, ճամփին վեր ընկան, կոտորվան. են ջան փորդիք ինձ խաբել ան ինք լակ եր, են մինի ել բուսակը դուս եկալ, ինձանի խրտնալ, փախալ...

Մեր ժամանակի այս զվարճալիքին կցված է իրրե շարունակութեան ի յերկրորդը, վոր «յասեղ չի բերվում:

Գյուղացու ծագր և և հետեյալը:

Այր ոմն կտաւաղործ բնակեալ էր ի Տամբատ, և իւր սովորութեան բարք էր՝ առ ի քաղաքանել զորդին՝ աւէր. Թագաւոր եմք արուեստիս: Եւ ի հարցման որդւոյն՝ թէ որ-

պէս, ասաց. Սանդրուղոյն իբր զթաղ դնեմ ի գլուխ, և զտէժ իբր զտուր վերացուցանեմ, և ի գործ կտաւին իբր յաթոս նստնմ, ընդ ոտիւք ունելով պատուանդան, և զկտաւ ժողովեմ իբր աշխարհ հնազանդեցուցանելով, և ձայն սանդերն իբր զձայն փողոյն եւ այլ ինչ ասացեալ այսպիսի Յայսմանէ ստիպէ զձայնն զգուտար թաղաւորին Պարսից խնդրել իւր, և երթեալ խնդրէր, և նորա զայրացեալ հրամայեաց սպանանելու եւ գիտացեալ, թէ ի Տամբատայ է այրն, հրամայեաց ներել:

Յուցանէ առակս, թէ ներման արժանի է առ աստուած և առ մարդիկ անգիտութեամբ մեղանշին:

Մխ. ձԳԴ. 131.

Մխիթարն այս առակի մեջ մէայն հայտնում և, թե Տամբատում էր ապրում իր արհեստով այնքան հպարտ կտավագործը: Բայց դրա մի պատմութեամբ կա Վարդանա առակներէ մեջ: Այստեղ այդ կտավագործը Տանպատեցի յե, իսկ Տանպատը գլուղ և և այդտեղի մարդիկը ամենքը հիմար ու խե են: Հայտնի յե, վոր կտավագործութեամբ պարապել են նաև գլուղացիք և մինչև մի հրսուռ-վաթսուռ տարի առաջ՝ մեր դաշտային գլուղիքից շատերում ձմեռները գլուղացիք կտավ ելին գործում:

Իներնք այդ առակն ևս ըստ Վարդանա առակներէ.

ՏԱՆՊԱՏԵՑԻ ԶՈՒԼՀԱԿ

Ջուլհակ մի ասաց, թէ աստուած զմարդն թաղաւոր է ստեղծեր. և նա այլ թաղաւոր եմ յիմ յանձնեմ, և տուր ինձ թաղ և իմ մասուրայքս և առէչս ինձ հեծելք և ժողովուրդ, և երթամ խնդրեմ Հնդկաց թաղաւորին դուտարն ինձ կնութիւնս եւ դնաց առ Հնդկաց թաղաւորն և ասէ. Տուր ինձ զքո դուտարն ի կնութիւնս եւ ասէ թաղաւորն. Ինչ մարդ ես և ինչ գործ ունիս, որ զիմ դուտարն խնդրեալ եւ ասէ. Ջուլհակ եմ: Բարկացաւ և ասէ թաղաւորն ընդ՝ զինուորացնս. Տարէք և սպանէք զգաւ եւ ասէ թաղաւորն. Հարցէք զայրդ, թէ ուստի իցէ: Եւ հարցին զնա. նա պատասխանի եւ ասէ. Յարեկից կողմ դեղ մի կայ. անունն Տանպատ այլ ասէ թաղաւորն. Թողէք զգաւ, մի սպանանէք, քանզի յիմար է. զի աշխարհն այն ամենայն խե է եւ արձակեցին զնա թաղաւորութեամբ:

Յուցանէ, թէ մարդ որ անգիտութեամբ մեղք գործէ, նա խե լինի և խեութեամբ գործէ. նա աստուած չի համարիր զայն՝ ծանր մեղքն, այլ սակաւ համարի. որպէս ասաց Քրիստոս, թէ՝ Որ ոչ գիտէ և առնէ, արբցէ զան սակաւս:

Առ. Վարդ. Բ. 293. ՄՂ.

Անցնենք այժմ յեկեղեցական դասին:

7.

Առակներէ մեջ ինչպէս ազնվականութեան, նույնպէս և յեկեղեցական դասի նկատմամբ փոխված ե արդեն հայացքը: Չնայելով, վոր Մխիթարի առակները գրել և մի հոգևորական, — առակներէ մեկի մեջ (ձԺԼ, յեր. 98) հեղինակն իր մասին հայտնում և, վոր հոգևորական և, քանի վոր նա քահանայների մասին խոսում և առաջին դեմքով, — բայց և այնպէս նրանց մեջ պարզ յերևում և աշխարհականի, այն ել վոչ ազնվականի վերաբերմունքը դեպի հոգևորականը, վոր և ապացուցց և մի շարք առակներէ աշխարհական ծագման: Ինքն Առակախոսն իբրև հոգևորական դեռ շատ մեծ կարծիք ունի յեկեղեցականների մասին. նրանք, ինչպէս յերկիրք յերկրից, շատ բարձր են աշխարհականներից և լուսավորութեան աղբյուրն են:

Երկիր հայեցեալ ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկիր. և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ ասնել նման երկիր՝ և լուսաւորել:

Յանդիմանէ նշանակա զաշխարհական ոմանս, որ փքացեալ ի ճոխութիւն իւրեանց, զքահանայից կամըն հափշտակել զպատիւ սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն, նման երկրի, զի լուսաւորին՝ քան լուսաւորէ:

Մխ. Զ. 8.

Քահանայական տոհմը, թեպէտ աղքատ, բայց հոգևորով հարուստ լինելով՝ արժանի յե Առակախոսի կարծիքով նույն իսկ թագավորական տոհմի հետ հավասարվելու:

Մնամութիւն առնել ընդ միմեանս կամեցան թթենի և ձիթենի. եւ պանծայր ի գորութիւն իւր իւրաքանչիւր որ, ձիթենի յարազուարճութիւնս և ի պողաւէտութիւնս, մանաւանդ զի պտուղ նորա նիւթ է ձիթոյ. և ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ խավորի Իսկ թթենի ի քաղցրութիւնս պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ է մետաքսոյ, զոր որդունք ծնանին, յորմէ կերպասք լինին, զոր թաղաւորք և իշխանք վայելնու Որում և զիմադրէ ձիթենի զգլխաւորութիւնս պտղոյ նորա, և զախտաւորն լինել հանդերձ, քան թէ հարկաւոր, և զի ի դիշերի մերկանայ, բայց լոյս ի դիշերի վասիւ Ասէ թթենի. Այլ ի տունջիան չիջանիւ եւ ասէ ձիթենի, թէ՝ Ոչ չիջանի, այլ յազգակեցն իւր խառնի. իսկ փառք քո ծաղկընկէց է և անցաւոր: Եւ այսու պարտեալ թթենի՝ և հայցէ լինել իրին:

Նշանակ առակին այսպիսի է. զի թաղաւորական ազգ թէպէտ փառաւոր է, այլ երկրաւորքս ճոխանայ, որք հոսանուտք են, որում թթենիդ է նշանակ: Իսկ քահանայական տոհմ թէպէտ և աղքատ իցէ, մեծապատիւ է հոգևորք, և արժան է զուգիլ ընդ թաղաւորական տոհմի:

Մխ. ԺԳ. 14.

Բայց այդպէս չե ժողովրդի հայացքը յեկեղեցականի վրա: Ինչքան ել սա յերևում և դեռ կարգապահ և մեծ ազդեցութեամբ ուսմիլի վրա, ինչքան ել կան նաև իսկական սևազգեստ կրոնավորներ, վորոնք մի անգամ վորոշած լինելով հեռանալ աշխարհից, միշտ սգավոր են մնում և նույնիսկ կարճ ժամանակով չեն ուզում ուրախանալ (Մխ. ձԼԴ, 112), բայց և այնպէս յեկեղեցականութեան ընդհանրապէս ընկած և պատկերանում: Հոգևորականը նույնպէս հափշտակող է, ինչպէս և իշխանը. ուստի նրա դեմ ել պայքարում և աշխատավորութեանը, և այդ պայքարն յերևան և դալին հաճախ ծաղրով:

Հին ճգնավորական խստակեցութեանն այլևս վոչ միայն հարկանք չի վայելում և ազդեցութեանն չի թողնում, այլ և, ընդհակառակն, ծաղրի առարկա յե:

Գնգածաղիկք և կորնդան և խորթ՝ առուայտ կապոյտ և սէզ և նմանք սոցին ծաղր եղեալ զցինիլ՝ ասէին, եթէ՛ ԶԻ՛ է զի մեք զուարճացեալք կամք, և նա ծիւրեալ դեղնութեամբ եւ լուեալ՝ պտտասխանեաց. Վասն զի անմիտք էք և աներկիւղ, ոչ խորհք և թէ՛ վասն մեր սուրք սրեն դերմնդեաց. իսկ ես խոկաւով յայտասիկ՝ զարհուրեալ դեմնիմ:

Յայտնապէս ցուցանէ առակս, թէ յոյժ անմիտք են որ մոռանան, եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան. և պատրեալք յերեւելի ի մեծութիւնս՝ ծաղր առնն զվարս երկրազածս և զիթումաւորս. ուստի յանդիմանին ի նոցունց անմտութիւնս նոցա. և ինքեանք գիտելով զապականութիւն երկրաւորացս՝ ոչ պատրին, այլ ճնշեալ և երկիւղիւ մշտ ներգեւելնու:

Մխ. ԼԳ. 39.

Ծաղրում են ուրեմն կրոնավորների կենցաղավարութեանն ասելով,

թե՛ ինչպէ՛ մենք ուրախ ենք և նա հալումաշ ե յեղել, դեղներ ի հարկե Մխիթարի համակրությունը ծաղրողներէ կողմը չե, վորոնց նա անմիտ ե համարում: Ծաղրում են կրոնավորներէ վարք ու բարքը, նրանց գծծությունն ու ժլատությունը, և նույնիսկ պահանջկոտ են նրանց և վանականների վերաբերմամբ: Աշխարհականները հյուր են գնում աղքատ կրոնավորներէ մոտ, նրանց նկղլի քարանձափները, ցույց են տալիս այդ դժվար տեղերն և միաժամանակ պահանջում են պարարտ կերակուրներ և խորտիկներ:

Երթեալք ի թուչոց ոմանք հիւր տատրակի և տեսեալ զնա աղքատ և գձուձ կրօնաւոր, և ցուցանէին նմա տեղի անձուկ և ի դէպ կրօնաւորութեան, մթանգամայն զանազան պահանջէն խորտիկս, զոր նա ոչ ունէր: Որոց ասաց, Զերկաքանչիւրսդ հակառակ տեսանեմ միմեանց խորհուրդ:

Զսովորութլն աշխարհականաց առակս յայտնէ, զի կրօնաւորս տեսեալ, և զտեղի քարանձաւաց նոցա ցուցանեն, և դարձեալ զպարարտ կերակուր պահանջեն: Որոց խորհուրդն ընդդեմ միմեանց, զի թէ յանձաւս ընտկիցեմք որպէս նոքա, զխմրդ զանազան կերակրօք զնոսա դարմանիցեմք ըստ կամաց նոցա:

Մխ. ձի. 107.

Կրոնավորները շատ անգամ բան չեն ունենում տալու. բայց և շատ անգամ ել պատահում են այնպիսի ժլատ ու գծծի կրոնավորներ, վորոնք դեղի համար ել բան չեն տալիս, և այդպիսիների գլխին աշխարհականները խաղեր են սարքում. «Ոչ ետուր դեղոյ, ետուր փորոյ»:

Արջու ցաւեցին որովայն, եհորց զաղուէս դեղ, և նա ասէ. Յայր բարեպաշտ՝ է այս անուն դեղ, երթիցես անդ՝ և տաց ձեզր որ յոյժ ոգուս է քեզ: Եւ իբրեւ մերձ եղես ի դիւղն, և զուճք անդէն փախուցին: Եւ սկսաւ մեղադրել աղուեսուն: Եւ ասէ աղուէս. Առանց զպրութեան է այրն, որ զքեզ ի շանցն ոչ ազատեաց՝ և ոչ ետ դեղ, և արք եկ տարայց զքեզ առ կրօնաւոր ոմն հմուտ աստուածեղէն բանից: Իբրեւ ետես կրօնաւորն՝ սկսաւ թշնամանել զնոսա Եւ աղուէսն եցայց զմուտ մեղուոցին, և արջուն մտեալ՝ զմի եկեր փեթակ, և զմի առեալ գնայր: Եւ կրօնաւորն անիծանէր զաղուէսն, իբրեւ զպատճառ փաստու: Որում ասաց, եթէ՛ Տմարդութիւն արար քեզ զայդ, ևս անպարտ եմ. զի ոչ ետուր դեղոյ՝ ետուր փորոյ, և ոչ ետուր դեղ:

Աշխարհական իբրեւ զողէտ անփնաս Մաց, և ի կրօնաւորէն վրէժ առաւ իբաւացի. զի յուշտութենէ բազում այսպիսի պատահի փնաս ի նենգաւորաց առաջնորդութենէ, ի գահանաբարոյ արանց:

Մխ. 2ի. 77.

Իրա պատճառն, անշուշտ, կեղծ կրոնավորությունն ե, կեղծ բարեպաշտությունը, վոր հաճախ հանդիմանվում ե Մխիթարից: Կրոնավորները կորցրել են իրենց խոնարհությունը (Մխ. ԻԵ, 29). կան այնպիսիները, վոր մահից վախենալով, այսինքն՝ գլխվորական ծառայությունից փախչելով, ասում են, թե կրոնավոր են, բայց անապատում ապրելու փոխանակ՝ աշխարհում դատարկ շրջում են:

Բազէ դնետ մտեալ աղաւնոյ, և նորա աղաղակեալ ասէ. Պատարազ եմ տէրունի, մի ինձ մեղանչերս Եւ նա ասէ. Պատարազս տէրունի ի տէրունի սեղանն իցէ, և ոչ աստ յօդս շրջիցի: Եւ հարեալ եկեր զնա:

Իճմք առակիս առ այնոսիկ է, որ ի մահուանէ զանգիտեալք՝ ասեն, թէ՛ զանձինս

տեսան նուերեալք եմք բնակել յանապատ. զոր ի դեպ իսկ ասէ՝ Թէ՛ այդպիտեացդ տեղի կրօնաւորք են, և ոչ վայրապար շրջիլ յաշխարհի. որում ոչ խնայէ, այլ բժբունէ:

Մխ. ձժՁ. 99.

Այսպիսի կեղծ կրոնավորներ միշտ ել յեղել են. բայց 12-րդ դարում դրանց թիվն, անշուշտ, մեծացած ե յեղել, վոր Ներսես Շնորհալին իր Ընդհանրական թղթի մեջ հատուկ ուշադրություն ե դարձնում դրանց վրա: Իրանք յեղել են «աշխարհասեր և մեղկ կրոնավորներ», սիրել են «մեղկ ու լույծ կյանք», ապրել են քաղաքներում ու գյուղերում, մասնակցելով ամեն տեսակի ուրախություններին. «ընդ աշխարհականս բնակին ի գեւղս և ի քաղաքս և ի բանից բերանոյ գարշութիւնս... և յորովայնամուրութիւնս անպատկառս և յարբեցութիւնս անառակս»:

Յեղել են, հարկավ, և այնպիսիները, վորոնք գնալով լեռը կրոնավորելու, չեն դիմացել տեղի դժվարությանն ու կյանքին և շուտով յետ են փախել աշխարհ՝ նորից իրենց հին կյանքին: Մխիթարի համակրությունն, անշուշտ, այսպիսիների կողմն ել չէ:

Երթեալ էջ կրօնաւորի ի լեռան. և զարհուրեալ ի զանութենէ տեղոյն, և զի խրատէին անհեղձ լինել, աղաղակեալ փախեաւ ասելով՝ ի Պատան ի Պատան, իբրեւ զի ջերմն է Պատան, և յայնմանէ եկն կրօնաւորիլ:

Ի դէպ գոյ այս առակ այնպիսի, որ յաշխարհէ և յանանական վարուց գան յանապատ, և զանգիտեալ ի կրօնից և ի խրատու մրանձանց, դարձեալ զիմեն յաշխարհ՝ յընդով գառաջին վարան:

Մխ. ձԳ. 91.

Շատ ուժեղ կերպով արտահայտված ե արդեն աշխարհական կյանքի ձգտումն առակներին մեջ: Քահանայության ուսումը, որհնեքությունն ու սաղմոսն այլևս չեն գրավում, զի սուգ և տրամություն են պատճառում: Թեպետ դեռ գրեան, վոր այս աշխարհի տրամությունը հետո այն աշխարհում ուրախություն և բերում, բայց և այնպես այդ քարոզին լսող, հետևող չկա: Մարդիկ ավելի սիրում են իրենց հոր արվեստը, ուրախ յերգը, խաղ ու պարը, «երկրաւոր ուրախութեանց պատրանքը»:

Մարեկ ետ զորդի իւր յուտումն քահանայութեան. և նա ի սոխձս և ի մրմունջս թեւակոթելու Եւ խրատէր քահանայն օրհնեքութեանց և սաղմոսաց փոյթ առնել, յորմէ սուգ և զղձումն յոգի զործք: Իսկ նա ի պար յուտոյր, թէ՛ հօր իմոյ արուեստ ուրախութեան է պատճառ, իսկ քոյդ տրամութեան: Եւ թէպէտ ուսաւ յետոյ՝ թէ՛ տրամութիւն այժմուս բերէ ուրախութիւն յետոյ, սակայն անուր եղեալ, դարձաւ ի առն իւր:

Զերկրաւոր ուրախութեանց ըզպատրանս առակս նշանակէ, որով զկատարածն իմանան, եթէ ի յողբ վախճանի, որպէս և տէր իսկ ասաց. նմանապէս և հոգեւորն սուգ յուրախութլն յանգիս:

Մխ. ձԼԳ. 112.

Այսպես ուրեմն, ինչքան ել տեսականի մեջ դեռ իշխում ե ճգնավորական հայացքը, գործնականի մեջ, ընդհակառակն, ուրախ կյանքը, աշխարհիկ վոզին ե տեղը: Նույն իսկ միայնակյացը սատանայի հետ պայման ե կապում և նրա ողնությամբ յեպիսկոպոսական աստիճանին հասնելով յեկեղեցին դարձնում ե գուսանական նվագի վայր:

ՈՒՆՏ ՄԻԱՅՆԱԿԵՅԻ ԸՆԴ ՍԱՏԱՆԱՅԻ.

Ասի յառակաց, թէ միակեց մի սատանայի ուխտ եղ, որ տարի մի ի պահս կենայ, թէ գնա ի մեծութիւն հասուցանէ: Սատանայ յաճն էառ կատարել զինդուածս նորա: Յորժամ վճարեաց զպահանս, շարժեաց զեպրակոպոս քաղաքին, որ եղ գնա եկեղեցապան. և ի մուս տարւոջն շարժեաց որ օրհնեաց գնա արեղայ. և ի մուս տարւոջն եղև մեանիլ եպրակոպոսին շարժեաց զթագաւորն և զքաղաքացիսն առնել լուրեանց եպրակոպոս: Եւ յորժամ կամէր զգնեստավորիլ, զի ժամ արասցէ, եկն սատանայ, ետ ի նա փոքրիկ չորեքաղի մի և սակ. Իմ ամէն լաւն փոխարէն, որ զքեզ յայդ մեծագոյն ստորճանդ հասուցը, զայս արա. առ զայդ փոքրիկ չորեքաղիդ ի ծոցդ դրբ. և զգեստդ ի վերայ հազըր և յորժամ ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ ի վերայ մէկ լարն գարկ: Եւ այնպէս արարեալ ոյտարեալ եպրակոպոսն՝ յանկարծակի հազարք հազարաց և բարք բերրոց տասնաղի և թմբիլ և սուռնայի և շանկի և չորեքաղոյ ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցոյն: Զարնուրեցան թագաւորն և ժողովուրդն և ոչ զոք տեսանէրն հարկանոց նուագարանացն: Հրամայեաց թագաւորն բռնել զգուռն եկեղեցոյն՝ և զլարքանչիւր որ մերկացուցանել և փնդուել: Եւ այնպէս արարեալ ոչ զոք դարն պատճառ, և մնաց թագաւորն և եպրակոպոսն միայն: Թագաւորն ևս մերկացաւ. և ոչ գտաւ առ նա ինչ: Եւ յորժամ մերկացուցին զեպրակոպոսն, գտին ի ծոցն զչորեքաղին այն. և ի շարչարանս արկեալ խոստովան եղև զուրացութիւնն և զգաւնս, զոր եզեալ էր ընդ սատանայ: Յայնժամ կապեցին գնա ի յազի ամեհէր ճոյ և թողին ի դաշտ. մանրամասնաբար կոտորեալ եղև մարմին նորա. և այնպէս աւանդեաց զգաւնացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Յուցանէ առակս, թէ ով որ սատանայի բարւոյն և ուխտն հաւատայ, բաժին նորա վերջն այնպէս լինելոց է:

Առ. Վարդ. ՄԻԳ. 252.

Պակաս ընկած չե իր զոչաքաղությամբ և քահանաների դասը: Առակախոսը քահանաների արգար իրավունքն և համարում, վոր միայն մեռելներն ստացվածքը կողոպուտ անելով ապրեն և վոչ թե իշխաններն նման նաև կենդանի մարդկանց ստացվածքը հափշտակեն անիրավությամբ. բայց իսկապես այդպես չի լինում:

Ձաղք ասեն ցծնոցս իւրեանց, թէ՛ Ընդէ՞ր նման արծուոյ և բաղէից՝ կենդանիս մեզ ոչ որսայք, այլ զմեռելոց ոսկերս բերէք մեզ ի կերակուր: Եւ նոքա ասեն. Որդեակք, վասն այն արար զմեզ աստուած երկայնակեաց, զի ոչ զկենդանիս սպանանեմք, այլ շատիք մեռելօրդ, նման քահանայից՝ և ոչ ըստ օրհնակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք:

Արդարապէս վարը մեզ առակս կամի, ճշմարտ և անկաւոր ընչուք մեռելոց. և ոչ զկենդանեաց անիրաւութեամբ յափշտակել, որով երկայնակեաց լիցուք յերկրի:

Մխ. ՃԺԵ. 98.

Քահանաները սուտ ու կեղծ են. ծուլլ են, խարերա, միայն արտաքին ձեւերը կատարող, մատաղի յետեից ընկած: Ազվեսները լափելու համար քահանա յեն դասնում:

Եզլտ աղուէս գիրս ինչ. և դնաց առ տգէտս ոմանս, թէ՛ Քահանայ եմ: Եւ կարգեցաւ քահանայի. և յաւուրս տօնից բարձրաձայն աղօթէր, և յօժարադոյն զաղ օրհներ, և ի յայլ աւուրսն հեղձայր. և ի լինել զենման մատաղոյ, զարիւնն եւս լեզոյր. և ի մեղաղիլ լինելն՝ սակ. նուրբեալ է, և այնպէս արժան է առնել: Եւ ի լինելն յայտնի կեղծավորութեան նորա՝ գնաց զաղաւ:

Մեկնապէս ունի առակս զմիտան. զի կեղծաւորք՝ որ բնաւ չիցեն քահանայք՝ պատրեւ գտնես. և թէ մյտ դնեն, ի գործոց իւրեանց յայտնին. և երեւելի լեալ գնան հալածեալք:

Մխ. ՂԼ. 84.

«Հոգևոր առաջնորդքն... խնամ ոչ տանեն հօտին... այլ զգէրն զենեն և ճարպոզն պարարտանան» (Առակք Վարդ. Բ. 198. ՃԿԷ):

Այսպես և Ֆրիլի «Գանդատի» մեջ քահանայի մասին՝

Բախտաւորն զայ ճօճկապի,
Գայ և նստի յաւազ բարձի.
Լուծն ի փորին ի ճուրջ անցնի,
Եւ ալելու մի չի զիպիլի.
Բայց վասն մէկ աւուր տօնի,
Որ թէ զատիկ, այլ տօն լինի,
Նա խաչհամբոյր իւրն շատ անկնի,
Մորթ և էրի և գաթանի:

Քահանաները, ինչպես և յեպրակոպոսներն ազանությամբ նույն իսկ խոստովանության խորհուրդը դարձնում են յեկամտի աղբյուր, պոռնիկներին և պիղծ մարդկանց նախ յեկեղեցուց մերժում են վախեցնելով, իսկ հետո կաշառքով ընդունում են և հաղորդում: Քահանան նույնիսկ անմեղներին մերժում է յեկեղեցուց. իսկ շարագործներին կաշառքով ընդունում յեկեղեցին (Առ. Վարդ. Բ. 257. ՄԻԶ):

Ի տօնի սրբոյ գատիլն եկին թոչուք ամենայն, և խոստովանութեամբ հաղորդէին օրինացն. եկին ընդ նոսա սաղո և հողաժաղ, և խոստովան եղին քահանային, եթէ՛ Ոչ այլ ինչ գիտեմք իրից, այլ զի որսացար միւռնս և գորտուս՝ և կերաք: Եւ նա մերժեաց գնոսա պիղծ կոչելով: Եւ երթեալ որսացին ձագս սուրբս, և մատուցին քահանային. և այսու պատրեալ արգարացոյց գնոսա սակով. Ոչ զիտացիք խոստովանել, զի այն ծերացեալ և ի թեւոց թափեալ թոչուք էր: Եւ հաղորդեցոյց գնոսա:

Ձագան քահանայից առակս տայ տօրացոյց, զի զպոռնիկս և զայլս եւս պիղծս մերժեն յեկեղեցոյ՝ երկեցուցանելով, իսկ յետոյ դարձեալ կաշառք ընդունին պատճառելով բանս ինչ, և հաղորդեցուցանեն գնոսա:

Մխ. ՃԻԱ. 102.

Այսպիսի դրության ժամանակ բնականաբար հաջողություն պիտի ունենար թոնդրակեցոց ազանդը, վոր ի միջի այլոց մերժում եր յեկեղեցու բոլոր խորհուրդները: Հասկանալի յե, վոր մարդիկ, նույն իսկ հովիվները չցանկանային այլևս հաղորդվել:

Յաւուր գատիլ տօնին եկին հալատացեալք հաղորդել, և զոմն հովիւ բռնադատէին հաղորդել. և տեսեալ ի բաց փախաւ. սակով. Ոչ ճաշ է զի կերայց, և ոչ հրամենք: Եւ ասեն. Այգբան է խորհուրդն: Եւ ոչ հաւանէր անուր, այլ ի բաց գնաց:

Ձար ամենայն ուստեք առակս ցուցանէ զանգրտութիւն վարբենացելոց ոմանց, զի յերեւելն միայն հայն և գաթազգիւն:

Մխ. ՃՂԲ. 137.

Առակախոս Մխիթարն այդ բացատրում և «վայրենացած մարդկանց անգիտությամբ», բայց իրականի մեջ այդ առաջացած է յեղել յեկեղեցականներն բարոյական անկման հետևանքով: Յեկեղեցու այդ խորհրդի ծաղրը յերևում է առակի պատմվածքից: Նույն ծաղրը տեսնում ենք և մի ուրիշ առակի մեջ, ուր հովիվը զազաններն կերածն է աստծուն մատաղ անում:

Ի ձեռաց շահնի յորսայն գերծաւ ձագ հաւքալի, և ասաց. Եղիցի պատարազ տեսան: Մաղք արար գնա հաւքալն, եթէ՛ Ձոր ձեռօք մատուցանես, այն պատարազ տեսան:

Ձեռագրերն ձեռացուցանել զբարձր առակս, զի զկերտարեալս զազանաց և զբեկեալս
գայլոց՝ նուէրս տեսն ասէր լինել:

Մխ. ճԺԸ. 100.

Այսպես և հին գուտանական յերդերի մեջ քրիստոնեական տաճարը
ծաղրվում է նրանով, վոր սիրականներն իրենց սերը խանգարող աքլորին
խորովում, ուտում են ու փետուրները տաճարին նվիրում: Այդ հին յեր-
դերի մեջ կան բազմական թվով այնպիսիները, վորոնց մեջ յերևում է ան-
տարբերութիւն զեպի յեկեղեցին, ծաղրվում են վանական սարկավազներն
ու արեղաները, յեկեղեցու սրբերը, խորհուրդները և այլն:

Վարդանա առակները մեջ ավելի զարգացած և քահանաների ընկած
վիճակը, ուստի և սուր յերգիծանքներ են հորինված նրանց վրա: Գող քա-
հանաները յեկեղեցու վրա մի սրբութիւնը չեն պահում այն աստիճանի,
վոր գողացած կովը տիրոջից թաքցնելու համար նույն խոյ յեկեղեցու սե-
ղանն են բարձրացնում և վարագույրը քաշում:

ԳՈՂ ՔԱՇԱՆԱՅ ՅԵՎ ԱՅՐԻ

Քահանայ մի զողացաւ զկով այրի կնոջ մը և էած ի յախոռն, և կին յիմացաւ, և սակ
առ քահանայն, Տէր, ժամ է մահուան իմոյ, եկ յախոռն, որ խոստովանիմ: Եւ յայն ժամ ան-
ցուց զկովս ի ներսի տուն և անդի ի ժամայտուն և անդի եկեղեցին: Եւ ասէ կին. Տէր, առա-
ջի բեմն պարտ է ասել զմահու խոստովանութիւն: Եւ հանին զկովս ի բեմն և քարշեցին
զվարայգուրն ի գէմ: Իբրև մտան յեկեղեցին և նստան, յանժամ կին ի վեր կալաւ զվարայ-
գուրն և ասէ ընդ կովս. Ո՛վ զարեւելի, զբեզ կով գիտելի, և արդ զբեզ պատարագաւ ո՞վ արար,
ասայ ինձ:

Յուցանէ առակս, թէ այսպէս համբերութեամբ և իմաստութեամբ պարտ է առաջնոր-
դին և վարդապետին զամենայն ինչ քննել, և ստուգել ամենայն քահանայս և յիմանալ զվարս
նոցա և որ չէ արժանի պատարագի, ծածկալարբ յանգիմանի և ոչ տայլ թուլ կրկին խաչել
զորդին աստուծոյ անարժան պատարագան և հաղորդութեամբն, որ չէ բարի անարժանու-
թիւն:

Առ. Վարդ. Բ. 73. ԾԳ.

Մենակյացները շնացող են (Առ. Վարդ. Բ. 69), նրանք էլ զողութիւն
են անում և զողացած ապրանքը ծածուկ ծախում բոլորովին չնչին գնով,
արդարացներով իրենց, թե Գրիստոս ասել է՝ ձրի առաք, ձրի տվեք:

ՄԻԱՅՆԱԿԵԱՅ ՅԵՎ ՏԱՃԻԿ ԻՇԽԱՆ

Միայնկեաց մի եկ ի գիւղ մի քաղցեալ, և ոչ անկեալ նմայ հաց, և ել ի շէնէն և գտաւ
դաճիկ իշխանին ձին, որ էր ի դիւղն, և առնու զնայ և տանի ի միւս գիւղն, ետ և էառ
հաց մը հասաւ իշխանի և ասէ. Ո՞վ միայնկեաց, ընդ է՞ր կարի առատ տուեր զձանդրայգին ձին
իմ ի մէկ հաց, իբրև զիմար: Եւ նայ ասէ. Ո՞վ բարի իշխան, մի ընդ վար շատայաբաներ, զի
Քրիստոս հրամայեաց, թէ՛ ձրի ասէք և ձրի տուէք:

Յուցանէ առակս, թէ պարտ է զայս ասել առաջնորդին և վարդապետին առ ժողովրդ-
դին, թէ համբերեցէք և մեր տամք զուրէն աստուծոյ:

Առ. Վարդ. Բ. 73. ԾԳ.

Ազգաութիւնն ու վորկրամբութիւնը հոգեւորականների, այլ և աշ-
խարհականների ամենամեծ պակասութիւնն է. 15-րդ դարում Միլլուիչ Նա-
ղաշը կալում է այդ ախտի դեմ իր վոտանավորներով, նույնը գտնում ենք
և Վարդանա առակների մեջ:

ԱՐՏՈՒՏ ԹԱԳԱՒՈՐ ԹՌՉԵՆՑ

Ժողովեցան թռչունքն և ածին զարտուան իւրեանց թաղաւոր, զի չէ զիշայկեր, և է
արթուն և սաղմոսասաց կարգաւոր: Եւ սահմանեաց միայրամութիւն և կարգեաց զիշխանս և
զաւրախարս: և սկսան զնայ և դան ի զեղջի մի սահման: Եւ աղաքն եղեալն էին որդայթ
Վան ձաղաք, և պատահեցաւ որդայթն առաջի արտուտին, և նայ էառ զհաս ցորենոյն, և
բախտեքքն անկաւ ի պարանոց նորս, և նայ անշնչացաւ: Եւ եկեալ զաւրացն հանին զբախ-
տեքքն ի պարանոցէն և ասեն. Ո՞վ բարի թաղաւոր և իմաստուն կարգաւոր՝ սաղմոսասաց
աթթուէն զի այս որ պատահեցաւ քեզ՝ ինչ էր, Եւ նայ ասէ. Ո՞վ բարի զուրք իմ, որ պահու-
թիւն և յորովայնայմուտութիւնն տարաւ զիշխոս իմ և զիմաստութիւնս, զի խորհեցայ ժած-
կայրս որ աւել զհաս ցորենոյն վասն սովուս իմոյ, զի մի տեսցէ որ ի զաւրաց իմոյ:

Յուցանէ առակս, թէ բազում սուրբ կարգաւորք և առաջնորդք կորընչին ի գծոխս
վասն աշխուժեանն և յորովայնայմուտեանն, որով գայթակղեցուցանեն զաղէտան և լինին
որդմեկիք առաջի Քրիստոսի:

Առ. Վարդ. Բ. 33. ԻԶ.

Այս ամենի հետևանքն այն է, վոր ժողովուրդը սառել և յեկեղեցուց
Այլ ևս ժամասեր չեն: Այլելի սիրով զվարճութիւն անելու, զվարճալի տե-
սարանների մտիկ տալու յեն գնում, քան աղոթելու և քարոզ լսելու:

ԵՐԷՑ ՅԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԳ

Կայր էրէց մի ի գիւղ մի և խիտ սաղմոսասէր, և զեղացիքն ոչ դային ի ժամ էրէցն
երթայր ի տունս նոցա և ասէր, թէ՛ Ի ժամ եկէք: Եւ նոքս ասէին, թէ՛ Գամբ: Եւ ոչ դային:
Եւ էրէցն որ մի սուտ խե եղաւ և զգաւազանն ի փոլոնին ծայրն ծաղից և ի վեր կալաւ և
շուրջ դայր և դոռայր: Եւ ասեն զեղացիքն, թէ՛ էրէցն խեցաւ, կրթամբ և ծիծաղութ: Ժո-
ղովեցան այր և կին և աղայ, մեծ և փոքր և եկին առ էրէցն: Եւ ասէ էրէցն ցժողովուրդն,
թէ՛ նստէք: Եւ նստան: Եւ ասէ էրէցն ցժողովուրդն. Ո՞վ մուրեկալ, քանի որ սաղմոսէր և
աղաւթէր և ժամ ասէի, նա սատանայ կապիլ էր գարնան ձեր և քարացուցեղ, որ զժար թուէր
ձեզ ժամ դալն, և այժմ սատանայի ձայնն եկիք շուտով լսել և ծիծաղել: Եւ բարկացեալ էրէցն
ձեզ զփրկունն և զնայ ի զեղէն:

Առ. Վարդ. Բ. 265. ՄԼԶ.

Մարդիկ այլ ևս հավատքի խնդիրներով չեն զբաղվում, գրեթե սառն
և անտարբեր են զեպի այդպիսի վիճեքը, վոր միջնադարի եյութիւնն է յին
կազմում: Հայտնի պատմական ակի առակի մեջ՝ ճշմարիտ հավատը բնա-
կանաբար դեռ քրիստոնյաներինն է, բայց դա հոգեւորականի տեսակետն է:

ԵՐԵՐ ԹԱԳԱՒՈՐԻ ՎՈՐԳԻՔ ՅԵՎ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՆ ՅԵՎ ԴԱՏԱՒՈՐ

Ասի ի պատմութեանց, թէ կայր թագաւոր մի և ունէր բազում ձոխութիւն և Գ. որդի
և ակն մի պատուական, որ առնէր բժշկութիւն: Եւ նա ետ նշան որդոց և ասէ, թէ՛ Յեռ մահ-
ուան իմոյ, որ ունի զակս զայս, նա առնէ զթագաւորութիւնս իմ: Եւ յորժամ մեռանէր ետ
զակն ի միոյ որդոյ իւրոյ: Եւ Բ. որդիքն արարին իւրեանց սպակի ակն ի նմանութիւն
այնմ ակնի և եկեալ վիճէին ընդ միմեանս վասն թագաւորութեան, և զնացեալ առ իմաս-
տուն զատաւոր մի առնել նոցա զատաստան: Եւ նա առեալ զակն եղ ի վերայ հիւանդին, և
յայտնեցաւ ճշմարտութիւնն, և նա ետ զթագաւորութիւնն այնմ որդոյն, որ ունէր զակն
պատուական:

Առակս ցուցանէ զթագաւորն ամենեցուն աստուած, որ ունի բազում որդիս ըստ արար-
չութեան և ետ զպատուական հաւատքն քրիստոնէից միայն, թէ որ ունիցի զայս, նայ է ժա-
ռանդ արքայութեան ըստ այնմ, թէ որ որ ոչ ծնցի ի ջրոյ և ի հողոյ, ոչ մտանէ յարքայու-

Թիւնն աստուծոյ Բայց բազում մարդիկը ունին դձև հաւատացելոց, այլ ոչ ճշմարիտ հաւատն. բանդի այլազգ սքանչելիք ոչ լինին, բայց միայն քրիստոնէից. զի սոքա ունին զճշմարիտ ակն. զի այնով ժառանգեցեն զհայրենի արքայութիւնն

Առ. Վարդ. Բ. 286, ՄՀԵ.

Ինչքան ել Առակախոսն ասելու լինի, «պատմական հավատքը քրիստոնյաներինն է», բայց և այնպես աշխարհականը, նույն իսկ հոգևորականը շատ ել չի հետաքրքրվում դրանով: Առակը Վարդանա, ձԽԲ, յեր. 168—172 «Քրիստոնեա և այլազգի, այլ և օրինակ վէճի յազգս հաւատոյ» առակի և իր վարխաններէ մեջ զրվում է այն խնդիրը, թե վորի հավատն է ճիշտ, հայկ, թե ուրիշ քրիստոնյաների. հայկ, թե այլազգու, այսինքն մահմեդականի Յեվ պատասխանն այն է, թե «12 քրիստոնյա ազգերը» լծված՝ ամեն մեկը հավատի վեմն (վարխաններէ մեջ՝ քար, լուսեղեն լեռ) իր կողմն և քաշում, բայց վեմը տեղից չի շարժվում:

Այր մի գնալով ի ճանապարհի հանդիպեցաւ արանց, որք զճողանա կապեալ ի բուն վեմ մի. զի շարժեցեն զվեմն և առ ինքեան քարչեցեն. բայց յամենեցունց կողմանց քարչէին, կամելով իւրաքանչիւր որ առ ինքն քարչի և իւրացուցանելու իսկ քարն ամենեկն անշարժի մնայր և անխախտ Ասէ այրն. Ով մարդիկը, եթէ կամիք շարժել զդա ի տեղւորջէ իւրմէ, ի միջէ կողմանէ քարչե՞ք, զի շարժեցել քանզի յամենէ կողմանէ քարչելով զգա շարժել անճնարկն է: Բայց նոքա ոչ կամեցան լսել նմա. այլ յամտեալ քարչէին ըստ սովորութեան իւրեանց. վասն որոյ քարն մնայր անշարժ:

Յուցանէ: Վեմն է ինքն Քրիստոս ըստ Դանիէլի և Պօղոսի. իսկ քարչօղբն առ ինքեան քրիստոնեայք. զի իւրաքանչիւր որ քարչ քրիստոնէից կամի հակառակութեամբ զՔրիստոս առ ինքն քարչի, այսինքն իւրացուցանելու բայց Քրիստոս անշարժ մնայ և ոչ առ մի որ զնայ, քանզի Քրիստոս ոչ կամի զհակառակութիւն և զընդդիմութիւն հաւատացելոց իւրոց. այլ զսէր և զմարտնութիւն նոցին, որովք շարժի Քրիստոս առ նոսա:

Առ. Վարդ. Բ. 171. ձԽԲ.

Այսպես և «72 ազգերն ել՝ ամեն ազգ լուսեղեն լեռը—աստված իր կողմն և քարչում, թե՛ յես եմ առաջ, բայց աստված ամենքինն և և անշարժ»: «Լուսեղեն լեռնն աստուած է, և ՀԲ (72) լուծքն ՀԲ (72) միլիթն է, որ ամէն միլիթ դէմ իւր քարչէ, թե՛ ևս եմ յառաջ և աստուածն ամենեցուն է և անշարժ»:

Այս ամենից, այս ազատախոհութիւնից արդեն շնչում է մի նոր վորդի, վորով վերջնապես կազմակերպվում է աշխատավոր դասի հայացքը յեկեղեցու և յեկեղեցականի մասին: Նրա համար յեկեղեցականը նույնն է, ինչ վոր ազնվականը: Նա հոգևորականութեան դեմ մաքաւելով՝ վերջ ի վերջո իրեն ավելի բարձր և դասում, քան հոգևորականին, թեպետ և չի համարձակվում այնպես կարուկ խոսել նրա դեմ, ինչպես ազնվականի դեմ: Յեկեղեցականը պատարագ է անում, մեղքի թողութիւնն առ լիս. բայց նա չեր անի այդ, յեթե չուտեր աշխատավորի վաստակը:

Բայց վորն է ավելի բարձր, հոգեմբը, թե մարմնավորը: Կարդանք «Եկեղեցի և ջրազաց» առակը.

Եկեղեցին պարծեցաւ իր սքրութիւն իւր և ասաց, թե՛ ևս եմ տաճար աստուծոյ և յիս գան քահանայք և ժողովուրդք յաղաւթս մատուցանել աստուծոյ և պատարագ. և հաշտի

աստուած ընդ աշխարհիս. և մեղաց թողութիւն լինի: Յայն ժամ զայ ջրազացն և ասէ ընդ եկեղեցին, թե՛ Զայն զառ ասես, արդար է և ճշմարիտ է. բայց դու զիմ հրախտիքն մի մոռանար. որ դիշեր ու ցեքեկ կու աշխատիմ և կու դատիմ, որ կոյ ուտեն քահանայք և ժողովուրդքն. և ապա դան առ քեզ աղաւթիլ և երկիր պահանել աստուծոյ:

Յուցանէ առակս, թէ կան աշխարհի մարդիք, որ հանապաղ աշխատեն և դատին, որպէս մեղու. և թաղաւորք և իշխանք և ամենայն մարդիք զվաստակս նոցա ուտեն և ապա երթան յեկեղեցին և զաստուած աւրհնեն և յիշեն:

Առ. Վարդ. Բ. 151. ձԻԶ.

Այսպես ուրեմն նախ մարմինը, ապա հոգին, նախ ուտել և ապա նոր յեկեղեցի գնալ աղոթելու: Կարդանք և մեկ ուրիշը Վարդանա առակներից.

ԱՂՈՒԷՍ ՅԵՎ ԿԱՔԱՆ

Աղուէսն էա կաքաւ մի ի բերանն և կամէր ուտել զնայ. և ասէ կաքաւն. Աւրհնեալ է աստուած, որ կոչեաց զիս յիւր արքայութիւն. զի գերժանիմ ի յայս չարեացս. և ապա դու, աղվէս, զոհացիք զաստուծոյ և ապա ուտես զիս. քեզ մեծ վարձք է: Եւ աղուէսն կրկնեցաւ և հայեցեալ յերկին և բացեալ զբերանն՝ ասէ. Գոհանամ զքէն, աստուած բարի, որ պատրաստեցիր ինձ սեղան բարութեան: Եւ կաքաւն զերժաւ ի բերանոյն և թաւաւ: Եւ ասէ աղվէսն. Ով անմրտս և յիմարս, յառաջն պարս էր ինձ ուտել և ապա զոհանալ զաստուծոյ:

Յուցանէ առակս, թէ զիտասացեալ իրքն մի համարիք քեզ և մի շնորհայիլ մարդու լինիս, մշնչև առնուս. և թէ ջուր տան քեզ, ի նոյն ժամն ի դող առ զինքն, զի շատք ասեն և ոչ տան զառացեալն իւրեանց, ով կղբար, և սուս լինին:

Առ. Վարդ. Բ. 58. ԽԲ.

Ահա թե ինչին է հանդում մեր միջնադարյան վերածնութեան միտքը մեր առակների մեջ. նախ ուտել և ապա զոհանալ աստուծու:

Յեվ չկարծեք, թե այս զաղափարը միայն մեր հին առակներինն է. դա բուն ժողովրդական հասկացողութեանն է, վոր տարբեր ձևով արտահայտված գտնում ենք նաև մեր արդի ժողովրդական առակների մեջ:

«Աղուիս զկաքաւ բռնից: Կաքաւ ըսաց. «Աղուիս, ինչ տ'էնիս»: Ըսաց. «Բի տ'ուտիմ»: Ըսաց. «Փառք տու աստուծն, նուր զի կի»:—Ինչ փառք խառ աստուծն, կաքաւ բերնէն թաւաւ: Աղուիս դարձաւ, ըսաց. «Ենուտ առն աւիւր ըլի, ինչ շուր կուշտ շուար, փառք տա աստուծն (Գ. Վ. Հովեհիպան, Փշրանքներ, Թիֆլիս, 1892, յեր. 30):»

Սոցիալական հարաբերություններ են իրենց հիմքում նաև միջազգային հարաբերությունները, վոր մի ազգի իշխող դասակարգն ունի մյուսի նկատմամբ: Ուստի առակների այս տեսութեանը լրիվ անհրաժեշտ է համար, տեսնենք այժմ, թե ինչպես Միխիթար Գոշն առանձին ուշադրութեան է դարձնում հայերի հարաբերությունն «այլազգիներին», այսինքն՝ մահմեդականներին հետ—ինչպես նա իր Դատաստանագրքի մեջ ել անվանում է մահմեդականներին—և ինչպիսի կարծիք ունի նրանց մասին:

Թվում է, թե բուն Հայաստանում թե քրիստոնյա և թե մահմեդական տերութիւններէ մեջ 12-րդ դարում իրար կողքի ապրող յերկու ժողովուրդներէ, հայերի ու սելջուկյան թուրքերի միջև հետզհետե մեղմանում է այն թշնամութեանը, վոր նկարագրում է Արխատակես Լաստիվերոցին: Կարծես, նրանք իրար հետ միեւնոյն տեղում ապրելով, կենդանի փոխադարձ ազդե-

ցուցվածը, խառն ամուսնություններն և ավելի ևս կրոնական անտարբերության հետևանքով, մի հայրենիքի, մի հող ու ջրի մեկ ընդհանուր ժողովուրդ պիտի կազմեյին, իրար հետ միացած ընդհանուր շահերով: Բայց այդ գլուխ չի գալիս 13-րդ և հետագա դարերի վերվայրումների հետևանքով և այլ պատճառներով:

Ի՞նչ է մտածում այս մասին Մխիթար Գոշը և առնասարակ յեկեղեցական դասը:

Յերբ իր բանակի մեջ շարժական յեկեղեցի ունենալու համար Ջաքարե գորավարն Անիում ժողով և դռնարում, այնտեղ բերում են նաև «մեծ վարդապետ» Մխիթարին: Ահա թե ինչ և ասում Մխիթարը ժողովական յեկեղեցուսուներին ու վարդապետներին. «Գուք հողայք վասն ազգիս, զի մի աշպխի սովորութեամբ խառնեսցին ընդ վերս, և ես հողամ վասն գորավարիդ, զի մի լիցի սա վրացի իբրև զեղբայր իւր, որում սպասեն վերք*»: Յեկեղեցականությունն, իր շահերի տեսակետով, վոչ մի բանի, նույն իսկ յերկրորդական կրոնական սովորություններն նկատմամբ զիջող չէր: Յեթե քրիստոնյաների վերաբերմամբ այսպես եր, բնականաբար Մխիթարի համակրությունը չեր կարող լինել հայերի ու մանմեղական թուրքերի այնպիսի բարեկամական հարաբերության կողմը, վորի մասին ասվեց վերևում: Այն ժամանակ, յերբ Ջաքարիան, «մեծ սպարապետ և շահնշահ արևելեան կողմանցն», սրի ուժով նվաճում եր Հայաստանի «այլազգիներին» մինչև Բագրևաճը և հասնում մինչև Արտաշիլը, Մխիթարը, վոր նրա խոստովանահայրն եր, չեր կարող անտարբեր մնալ զեպի «այլազգիները»: Նա առակաների մեջ հրահրում ե հայերի կրոնական զգացումներն և ատելությունը զեպի մանմեղականները, ցույց տալով, թե նրանք չեն կարող միմյանց բարեկամ լինել:

Ազգերն իրենց ցեղական ու լեզվական տարբերությամբ ընդհանրապես իրար դեմ անհավան կերպով կանգնած են յեղել, կամ, ինչպես Ֆրիկը գրում և,

Ուրիշ լեզու ամեն մեկի,
Որ մեկ մեկի ոչ հաւանի:

Այս անհավանությունն անա կրոնականի մեջ ավելի մեծ ուժով և յերևան յեկել: Ուստի և ազգերի խորությունը պահելու միջոցներից մեկը հոգևորականների համար յեղել և ուրիշներն կրոնի, կրոնական ծեսերի յեղծումը ծաղրով:

Առակագիր Մխիթարի աչքին ամենից առաջ դարնում և «այլազգիներ» լիացումը, վոր նա ծաղրում ե: Ըստ Առակագրին՝ նրանք շատ չարիքներ են գործում՝ իրենց առաջնորդներին՝ մոլլաներին հետևելով կապկարար, և յերբ մեղադրվում են, մեղքը ձգում են իրենց մոլար առաջնորդի վրա և ասում են. «այլազգի եմ, լուսնամ և սրբիմ»:

*) Կրթական վարդապետ Գանձակեցի. Գատմութիուն հայոց, Թիֆլիս, 1909. յեր. 167.

Յտես կապիկ զմալում զի լուսնայր, և լուսացաւ Յտես զի ի բարձրաւանդակ ելեալ ազաղակեաց. արար և զայն կապիկը իջեալ ետես զի գէշ ուտէր շուն, և սկսաւ կապիկը եւ ի մեղաքը լինելն առաց՝ Սյլազգի եմ, լուսնամ և սրբիմ: Զի զտեսալն զործէ:

Գարդ է առակս. զի զբաղում չարն տեսանելով զործեն, և լուսացալ՝ տեսն սրբիւ, զպատճառն ի մոլար առաջնորդն կուտելով:

Մխ. ՉԹ. 85.

Ներսես Շնորհալին արդեն ծաղրում և մանմեղականների այս ծեսը:

Այն որ գործէ զաղտեղութիւն
Չանասելի մարդոյ լեզուին.
Վ Ուսուցանէ իւր ժողովին
Գործել ըզնոյն ըզպղծալին.
Եւ քաւութիւն մեղաց նոցին
Օրինադրէ լուսնալին.
Ողորանել ջըրով զետին.
Մաքբել միայն զերեկին.
Որով և գորաք՝ որք ե ջըրին,
Առաւելուն քան ըզնոսին:

(Ողբ Եդեսիոյ):

Մխիթարի առակաների մեջ ուրիշ անդ ծաղրվում և մանմեղականների մատաղը, վորի վրա կուվում են:

Գատարազ զենման մատուցանել ազաւ կամեցաւ, և զբաղումս հրաւիրեաց, և եկին յօժարեալք: Եւ զենումն նորա էր մուկն հնացեալը եւ սկսաւ ինքն հարկանել, և ապա այլքն և եղև պատերազմ. և զբաղմաց զայնն փորեցին, և մերկ զմիմեանս արարին: Եւ սկսան նորովի զպատարազ նորա, և զմատուցողն եւս. և ասաց նոցա, թէ՛ Յաշակեբոսացն ուսայ ի... զպիղծն մատուցանել, և զարձեալ պատերազմել:

Գիտելի և ամենեցուն առակս. զի զգէմս պատարազին ունին պղծոյն...:

Մխ. ճԻԹ. 109.

Կարդանք և այս առակը.

Մեաւ սրդի աղաւու՝ և սղաց յոյժ. եկին և բազումք յոյր նորա, և նա ճաշ մեծ յորինեաց սղաւորացն տակով: Զայս ի քրիստոնէիցն ուսայ, և ոչ ի յայլազգեաց. զի ժլատեալք ի լաց և ոչ ի հաց կոչեն: Եւ զայս ազաւ արար, զի զբան պատարազին բժշկիցէ:

Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա թիւրս ցուցանէ՝ զսոյս և զպատարազի և զայլոց եւս:

Մխ. ճԼԱ. 110.

Այսպես ուրեմն «այլազգիներ» բոլոր կրոնական սովորություններն ու կարգերը թյուր են ըստ Առակագրին: Յեթե նրանք մի լավ բան ունին, ինչպես մեռելահացը, այդ ել քրիստոնյաներից են սովորել, ասում և Առակագիրը:

Մխիթարն իբրև հոգևորական դեմ և յինում խառն ամուսնություններն: Նա մեծ հողացողություն ունի, վոր այդպիսի ամուսնություններ չլինեն հայերի և մանմեղականների մեջ:

Բու հրեշտակ տաքեաց առ արծիւ, և ինդրեաց զդուստր նորա հարսն տակով: Գուտընջեան քաջամարտիկ ես, և ես զիշերոյ. պատահիմք ի խնամութիւն: Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալը եւ ի լինել հարսանեացն, ի առէ լոյս ոչ կարէր տեսանել:

փեսայն, և ծաղր անելին բաղձաբերն: Եւ իբրեւ եղեւ գիշեր՝ և ոչ հարսն ետեո լոյս, յա-
հախեաց և անդ այգաւունմն: Եւ վասն այսորիկ փութով լուծաւ հարսանընն:

Զմիտս իւր առախ նմանեցուցանէ այնոցիկ հաւատացեալ թաղաւորաց և իշխանաց,
որ զգտեալս իւրեանց ըստ իրից պատճառի յամուսնութիւն տան այլասեոյց՝ խաւարելոց ի
լուսոյ հավատոց, ուստի և ոչ է միաբանութիւն, այլ հարկաւոր՝ բաժնաւ:

Մխ. ձԻԳ. 104.

Քրիստոնյա թագաւորներն և իշխանները, ասոււմ և Առակագիրը,
իրենց այլիկներին վորեւ պատճառով ամուսնութեան են տալիս «այլազ-
գիներին», բայց զբանով սեր ու միաբանութեան չի լինում: Նա այս առա-
կը զրելիս անշուշտ նկատի ունի նաև այն, վոր Զաքարիէի յեզրայր իվանի
Աթաբեկն իր այլիկան տվել էր Հալիբի սուլթանին կնութեան: Այս միևնույն
առակի խրատականը Վարդանան առակների մեջ (Գ. 107. ԾԱ.) այսպես է.
«Յուզանէ զհաւատացեալ մարդիկ, որ զգտեալս տան այլասեոյց խաւարե-
լոցն ի լուսոյն Քրիստոսի»: Ուրեմն վոչ միայն թագաւորների և իշխանների
դուստրները, այլ ընդհանրապես:

Մի ուրիշ առակ:

Քորէկ թախանձըր զոգնի թէ՛ Զորդիզ քո սան առից, և բարեկամք լիցուք: Եւ իբրու
յանձն էառ զինի բազում հարկի, տաց, եթէ՛ Վասն զի գժուարահամայր ե, մերկացո գնա,
զի զիւրին իցէ ի դոզուել: Եւ պատրեալ արար: Եւ իբրեւ ետ գնա, սկսաւ ուտել, և ձեռնաս
ոչինչ էր անել, և գնաց բազում կոծով:

Զխորամանկութիւն այլասեոյց առակս նշանակէ, որ զքրիստոնեայս պարզամիտս
պատրեն՝ իշխանաց տալ զորդիս նոցա, զի պատուեալ մեծացուցանիցեն. և ոչ կամին թէ
խրատչ ոք ընդ նոսա իցէ, զի թափուր արարեալ զոգնիս նոցա, սպանանիցեն. որ և յայս
եղեալ խաբէութեան, ոչ ինչ կարող են անել, բայց միայն ողբան. նմանապէս և ի գտեալսն
է տեսներ:

Մխ. ձԺԱ. 95.

Այստեղ ել Մխիթարը պատմում է, թե «այլազգի» իշխանները խորա-
մանկութեամբ խաբոււմ են պարզամիտ քրիստոնյաներին, վոր իրենց վոր-
գիներին տան իրենց, խոստանալով, թե մեծ պատվի կըհասցնեն նրանց:
Միաժամանակ, սակայն, նրանք չեն ուզում, վոր այդպիսի քրիստոնյա
տղաների կամ այլիկների հետ խրատող մի մարդ գնա: Ծնողները չեն հաս-
կանում վորոգայթը և հետո միայն իմանալով այդ՝ լուկ վորում են:

«Իշխող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում իշխող
մտքեր են, այսինքն՝ այն դասակարգը, վորի ձեռին և հասարակութեան
իշխող նյութական ուժը, նա միաժամանակ հանդիսանում և նրա իշխող
հոգևոր ուժը: Վոր դասակարգը վոր կարող և անորեն լինել նյութական
արտադրութեան միջոցներին, նա միաժամանակ զբա շնորհիվ անորի՞նում է
հոգևոր արտադրութեան միջոցները: Այնպես վոր զբա շնորհիվ նա միաժա-
մանակ իշխում է առհասարակ նրանց մտքերի վրա, վորոնք միջոցներ չու-
նեն հոգևոր արտադրութեան համար»: Այս պատճառով ահա հոգևորական-
ների հայացքներն ու գաղափարախոսութեանն առհասարակ, վոր յերևում են
առակների մեջ, նրանցից անցել են մեր շինականութեանը: «Այլազգիներին»
կրոնի ծաղրն ու խառն ամուսնութեան վերոհիշյալ զիծը գտնում ենք և մեր

ժողովրդական վեպի՝ «Մասնա ծների» մեջ, վոր իր վերջնական կառուցվածքն
է ստացել մինչև XIII դարի կեսերը: Դավթի կին Մանդուկը, մի քանի պա-
տուհներով, «այլազգի» յիւ Հայազգի Մովսէս խանումը գնում և «այլազգու»,
բայց նրա հետ ծածուկ գնում և մի վարդապետ:

Կարդանք հետևյալը:

Ճայկի առ սաղ աղերսէր, եթէ՛ Գիշերադէմ գոլով ես՝ ի բնաւից պարտաւիմ. և դու
այդքան սպիտակ և պայծառ լինելով. աղաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտակամար
Եւ նա կամակից եղեալ՝ առաց, թէ՛ Միշտ նման ինձ լուսացիս ջրով: Եւ ի լուսանայն ելանէր
սեւ նորա փետուր, և դարձեալ նոյն դայր օրինակաւ: Եւ զայս դարձեալ աղաչէր ուսանել-
որում առաց. թէ ընդ լուսամանդ զիմա ուսցիս լեզու, ապա կարցես նման ինձ լինել: Եւ
նա յանձն ոչ աւնոյր գաղղի մտանալ գձայն. և մնաց նոյնօրինակ գիշերադէմ:

Մեկնի այսպէս առակս. զի գիշերադէմ են ողբով ազգ. Պարսից. և եկեալ առ քահա-
նայս՝ զպայծառութիւն կամին ուսանել ողբով, զոր առաց զխորհուրդ միջբուծեանն ամբողջ
պահել: Եւ նա լուսացեալ ի մեղաց փոխեալ լինէր, և դարձեալ գձայնարան խոստովանութիւն
յանձն ոչ աւնոյր, նոյն օրինակաւ. մնայր սեւա ողբով. զոր չէ արժան և ոչ ջրով միբակ,
եթէ գնաւատս ոչ ընկալցին:

Մխ. ձԼԵ. 113.

Ուրեմն կան պարսիկներ, վորոնք յենթարկվում են հայերին և
սրանցից չպարսավելու համար՝ խնդրում են քահանաներին, վոր
մկրտեն իրենց, և մկրտվում են: Նույն խսկ սրան դեմ է
Մխիթարը: Դրանով նրանք խկական քրիստոնյա չեն դառնում, ասում
են նա. քանի վոր այդ մկրտողները հանձ չեն առնում իրենց հայրենի բնու-
թեանն ուրախալ, «զազգի մոռանալ զձայն», այսինքն՝ հայ դառնալ լեզվով ու
բարքով, այլ մնում են իրենց ազգին, իրենց հին վոզով և վարք ու բարքով:
Այս պատճառով և Առակխոսը խրատում է, թե այդպիսիներին «չէ արժան
և ոչ ջրով մկրտել, եթէ գնաւատս ոչ ընկալցին»: Այս սովորութեանն և
այսպիսի մկրտութեանը, յերևի, յերկար հարատևում է մինչև 19-րդ դարու
զվարճալիքը, թե քրդի կամ թուրքի յերեխաները չեյին մնում. ծնվում է
մի յերեխա ևս, վորին հայրը բերում է քահանայի մոտ և նրան շատ բուրդ
ու բամբակ տալով՝ խնդրում է մկրտել: Քահանան ել մկրտում է ասելով.

Գեար գայ Սովալանա,
Քուրքի տղան լողանա.
Ինձ ինչ կը հայանա, թե կը թուրքանա,
Թաք իմ բուրդ ու բամբակը բոլանա

Մխիթարի առակների մեջ տեսնում ենք, վոր «այլազգիները» գրեթե ընկ-
ճված են, և նրանց ու հայերի հարաբերութեանը բարեկամ կան և:
Բայց ըստ Առակագրին այլազգիները սրտով բարեկամ չեն, այլ միայն ու-
ժի առաջ խոնարհված են. ուստի պատրաստ են միշտ յերդմնագանց լինելու:
Քրիստոնյա թագաւորը ձեռի տակ ունի «այլազգի» իշխաններ, վորոնք
խոստանում են անհապաղ տալ թագաւորի հարկը, մի պայմանով միայն,
ասում են, վոր «մի յարաժամ զմեզ զարհուրեցուցես»: Թագաւորը դաշինք
է դնում և պահելով իր ուխտը՝ յերկար ժամանակ խաղաղութեամբ ապրում
է նրանց հետ: Բայց նրանք այդ խաղաղասիրութեանը թուլութեան են

կարծում, սկսում են ապստամբել, այլ և ծագրել նրանք Այդ ժամանակ քրիստոնյա թագավորն էլ չհամբերելով հարձակվում է նրանց վրա և շատերին կոտորում անխնայ:

Ջարժիւ աղաչել սկսան թռչունք միանգամայն որ ընդ ձեռամբ նորա, և ասեն. Անյապաղ զհարկ քո տալուք, մի յարժամ զմեզ զարնուրեցուցեալ եւ նա դաշինս եղ, և կայր ընդ նոսա խաղաղութեամբ քաղում ժամանակս: Եւ սկսան ապստամբել, այլ և այլապէս և ժողովեալ խորհէին և յիշխանութենէ ևս ընկենուր: Պարծէր և ճընճղուի, եթէ՛ Յաչո նորա ծրտեալ կուրացուցանեմ: Եւ իւրաքանչիւր զօրութեամբ խորով պարծէր, և սկսան մարտ եւս զենք եւ նորա ոչ տարեալ յարձակեցաւ ի վերայ, և զքաղումս ի նոցանէ աստակեաց:

Տպաւորէ այս առակ զգէժս հաւատացեալ թագաւորի և զանհաւատից, որ քարեպաշտութեամբ խաղաղութիւն առնեն. և նորա ազախտացեալ ապստամբեն, զպատճառս խաղաղութեան ոչ զխտրով և այլապէս, և պատերազմ եւս շարժեն, և ակամայ լինին մահ արկանել նոցա անխնայ:

Մխ. ձԻԴ. 105.

Ներսես Շնորհալին արգեն «այլազգիներէ» համար սովորական և համարում ուխտադրութ լինելը.

Ջուխտն սակր զոր եղ ընդ նոսին,
Որպէս բնութիւն էր այս նոցինս
(Ողբ Եղեւիտ):

Նրանք սիրում են արյունհեղութ յուն, ասում է Շնորհալին:

Սուքն անողորմ անօրինի
Որ մեր արեանս է ծարաւի,
Որ չէ յազեալ և ոչ յազի
Մինչև ի դալ կատարածիս...

Թվում է թե, ըստ Մխիթարի, սուտ յերզումը սովորական է յեղել իր դարաշրջանում ընդհանրապես:

Միուրեք համանգամայն հրեշտակս առաքեն առ կատուն և ասեն. Ձի՛նչ քեզ մեղանչեմք՝ որ այդքան զմեզ հալածես. զի՛նչ քո ուտեմքս եւ նա ասէ. Ո՛չ գիտէք, եթէ՛ յայն սակս զմեզ զարմանն մարդիկ, զի զամբարս նոցա մեք պանկացուք, արդ եթէ՛ զուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ զրջեսցիք, և ոչ ինչ ձեզ ֆրասեցիցս: Եւ ձեան ի գլուխ եղեալ երգմամբ հաստատեաց զայս: Եւ մկանցն համարձակեալ՝ կամեցան զանկեալ հատան առնուր. և յարձակեալ ի վերայ կալաւ զքաղումս ի նոցանէ: Եւ ասեն. Ո՛չ ապաքէն երզուար՝ անկեալ հատի ոչ առնուր վրէժս: Եւ նա ասէ. Ո՛չ երզուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկին: Նման իսկ է առակս կեղծաւոր երզուեցողաց, զի և ոչ պայմանի մնան և ոչ ուխտի, այլ ստեն՝ զիպող միայն ժամ գտեալ:

Մխ. ՂԱ. 81.

Բալական և միայն կարգալ Վարդանա առակներից մեկն էս, «Տաճկաց օրէնք», այսինքն՝ մահմեդական սրենք, վորպեսզի ասեննք, թե ինչպես նրանք, ըստ Առակախոսին, պատրաստ են յերզումը խախտել վորեւ ձեակա՜նութ յամբ:

ՏԱՃԿԱՑ ԱՆՐԷՆՔ

Տաճիկ ֆրախի մի զէնջ փախուցիւր էր և այլ ոչ կարէր բռնել: Եւ երզումն արար ի վերայ կնոջ իւր, թէ՛ Դ. տալախ կնիկն պոչ լինի ի յւերմէ, թէ՛ զէնջ բռնէ, հեծնու և այլ իջանէ յիշուն: Եւ յորժամ բռնեց զէնջ և հեծաւ և եկաց ի վերայ իշուն, շատ մի և յեճե-

գեցաւ և քշէր զէնջ և ինքն ի վերայ: Եւ երթայ առ կարգացողին, թէ՛ ֆաթիլայ տան. որ յերբ իջանես յիշուն և կնին ոչ թողուի: Եւ ամենեքեան ասացին, թէ՛ Այդ բանից ոչ կայ ֆաթիլայ: Եւ յետոյ եկեալ մըն կարգացող և ասաց, թէ՛ Մի տարեկուս լինիք. այսոր բան հեշտ է. զնա քշէ զէնջ ի ծառին տակն և ել յիշոյն ի ծառն և իջըր ի ծառն ի վար:

Յուցանէ առակս, թէ՛ այլազգիքն առասպելք են և բնութեամբ զուրինացն զօրծեն. բանիկ աւրէնս ոչ ունին. զի անաւրէնք են և յամենայն աւրէնս իւրեանց զստասպելս խառնալ ունին:

Առ. Վարդ. Բ. 174. ձՈՒ

Մի անգամ, վոր «այլազգիներէ» մասին այս կարծիքը կա կազմված, Առակախոս Մխիթարը խրատում է՝ ամենևին չհավատալ «այլազգիներին», զգուշանալ նրանցից:

Ողբէր ոմն զխրեմյշիւն՝ ասելով. Արի՛ եկ արտաքս, զի մեծարեալ պատուեցից զքեզ քաղմագան օրինախօր: Եւ նա ասէ. Ձըք ոս զքեզ տեսեալ պատուասէր առ այլս, զի արդ և ինձ լինիցիս. ոչ է այդ. այլ զի արեան իմոյ ցանկատս եւ ոչ ել արտաքոս, զերծեալ ի նմանէ զգուշութեամբս:

Ջարթուցանէ զմեզ առակս, ամենևին ոչ հաւատալ պատիր բանից այլազգեաց, յայտնի ունելով զմիտս յանշիւոց խաբէութեանց առ այլս. զի արեան և ստացուածոց ցանկան քրիստոնէից, և ոչ եթէ՛ պատուեն:

Մխ. ՀԲ. 67.

Այս ժամանակներից են անշուշտ գալիս մեր այն ժողովրդական առածները, վորոնցով վորոշվում են մեր և «այլազգիներէ» հարաբերութ յունեները և զգուշութ յուն է քարոզվում նրանց նկատմամբ:

Մխիթարը մի ուրիշ տեսակ վերաբերմ ունի էլ ի խրատում ընդհանրապես թշնամիների հանդեպ.

Եկեալ սող ձկանց առաջի թագաւորին իւրեանց՝ և ասեն. Ձի՛ տասցէր թէ՛ թշնամիք առ մեզ ոչ զան, և վասն այն ոչ տամք պատերազմ. ահաւասիկ եկեալ մարդիկ որսան զմեզ, և զու վրէժ ոչ առնուս. և սողոցաձկանն հարեալ զնա. որսորդաց՝ և զքաղումս ընկզմեաց: Եւ զայլս եւս եղեալս պատմէին նմա: Եւ լուեալ զչարացաւ նոցա, և ունեմն ձկան հրամայեաց զան ունել նաւորդաց, զի մի այնպիսի ինչ պատահիցէ. և զնոսա հաճէր: Ո՛չ գիտէք, ասէ, զի իշխան մեր են մարդիկ կարգեալք յաստուծոյ, և վասն այն հարկ է մեզ լուել՝ զոր ինչ և զօրծեն:

Հանձարեցս կամի առնել օրինակս զթագաւորոս. զի յորժամ հօր որ քան զնորայն իցէ թագաւորութիւն, և կամիցի հարկս պահանջել, յանձն առցէ տալ սխրով, և զընդդմացեալսն խրատեցէ՛ ոչ հակառակել. զի յաստուծոյ կարգավորեալ է՝ ակարի հնազանդ լինել հօրի:

Մխ. ԿԷ. 63.

Ուրեմն հորդների առաջ հարկավոր է լուել և հարկատու լինել: Մի ուրիշ առակի մեջ խրատում է, թե յերբ թշնամիներին դիմադրել չեն կարող, ալիքի լավ է նույն իսկ այդ մասին ժողով չանել և չխորհել:

Ազդ ճընճղիաց հրապարակ եղին խորհել զորսոցաց. իսկ ծերունի ոմն ասէ. Մի ժողովք, զուցէ լուեալ զձայն թեւոց թշնամեաց, և թուուցեալ՝ զվատասարտութիւն ձեր յայտ անիցէք. այլ յեկեղեղիս դմեալ աղօթեցէք՝ առ աստուած: Եւ ոչ լուան. և յանկարծակի ձայն առին թեւոց որսողաց, և լուծաւ երախանս:

Ձմեկ խրատէ առակս. զի յորժամ չիցեմք բավական ընդդէմ կալ թշնամեաց, բարի է ոչ ժողովելոյ վասն նոցա տալ կարծիս, և դւրաւ լուծանել յանէ նոցա, և զվատասարտութիւն մեր յայտ առնել. այլ խրատու իմաստնոց յեկեղեղիս յաղօթս աղաւինել:

Մխ. ձԼ. 110.

Առնենք մի ուրիշ առակ.

Հարցաւ ընդ թղննի, թէ՛ Ձիարդ է զի բազում ոտտա առ երկրաւ տարածանեալ եւ նա սոսէ. Քանզի բազում են թշնամիք իմ, և ես խոնարհիմ, զի մի ոտտակոտոր եղեց. և նախ քան զելաննն յիս՝ յագեցուցանեմ, և մոռանան զչարութիւնս:

Որքան զմեզ առակս, խոնարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ ընդ առաջ կրանել թշնամեաց, յորժամ ստնանել ոչ կարեմք. զի շիջանիցին ի դառնութենէ բարուց, և մոռացին զչարիս:

Մխ. ԺԲ. 13.

Այս առակի մեջ տրված խրատը, խոնարհության թշնամիքն երբ առաջ, արդարացվում է նրանով, թե թշնամիքները շատ են, և յեթև այդպես չվարվի մարդ, «Վոտտակոտոր կը լինի». ուստի թշնամիքները հարձակվելուց առաջ՝ նրանց աչքը պետք է կշտացնել: Թույլի վարմունքի ուրիշ կենցաղական խրատներն էլ և տալիս նա. «Անփնաս է (հոգու սեռակետով) զիպող ստութեամբ ազատիլ ի վտանգէ թշնամեաց, և է անհպիր» (Մխ. ԶԳ. 74), ինչպես և յերբ մարդ ընկնում է սպանողի ձեռն, կարելի չի խարեյությամբ ազատվել բռնի մահից:

Յեղ վերջապես՝ յեթե մեկն իր թշնամու ձեռից փախչում է և մահից ազատվում, նա յերկշուտ չէ, այլ արի:

Անկաւ ի պատռէ կերողի հատ սրտեան. և այգանեցաւ ի բաղլայէ որպէս զերկշուտ որում ասաց. Ոչ եմ երկշուտ, այլ արի:

Տուցանէ առակս, յարժամ յագականչաց կենաց մերոց զանդիտեի, սակայն արիութեամբ ի նոցանէ փախչել:

Մխ. ՀԲ. 45.

Ահա ուժեղ թշնամու և առնասարակ ուժեղի հետ թույլի վարմունքի յեղանակներ, վոր մեր ժողովրդի մեջ յեկել հանգել են այն տուածիքն, թե՛ «Այն ձեռք, վոր կտրել չես կարում, պիտի պաշխս դնես ճակատիդ»: Այս առածը, սակայն, այդպիսիքն նկատմամբ, ավելի ուշ ժամանակի չի, յերբ հայերը խիստ ճնշված են յեղել զորեղ հարեաններէց և ստիպված են յեղել այդպես խոնհարվելու, վորի պատկերը շատ ուժեղ հանված է Վարդանա առակներից մեկի մեջ («Քահահանայ և Ղազի»): «Էրէց մի և խատի մի և խատուն սև ծառայ մի երթային ի ճանապարհ. և էրէցն ամենևին ոչ խօսէր: Եւ ասաց խատին. «Քայիշ, սաս ինձ բան ի գրոց»: Ասաց էրէցն. «Սէտի, նայ դու Գ հագուց ես հագիր պողպատի և ես մերկ եմ: Ա. զի խատի ես և շարաթ. Բ. զի մսըման ես. Գ. քու իրաւն իրաւ է և սուտն ալ իրաւ ես: Նա ասաց. «Մի ան կրեր. հանց բան ասէ որ հաւանիմ»... (Ս.ա. Վարդ. Բ. 167. ՃԽԱ): Ահա թե ինչու ստիպված է քահանան խոնհարվել զազու առաջ և, ինչպես շարունակութեան մեջ պատմվում է, քրիստոնեութեան և մահմեդականութեան մի համասար կարգում դնել:

Այս ծայրահեղ խոնարհութեանն, ինչպես ասացի, ավելի ուշ ժամանակի չի, յերբ զաղին յերեք պողպատի հագուստ եր հագած, իսկ քահանան մերկ եր: Մխիթարի ժամանակ, սակայն, յեթե հայերը մի տեղ թույլ եյին «այլապիսիքներից», ուրիշ տեղերում մեծ մասամբ ավելի ուժեղ եյին զգում իրենց: Ուստի ինչքան էլ Մխիթարը խաղաղասիրության և անհրաժեշտութեան

առաջ խոնարհել և խրատում, բայց և այնպես նա չի քարոզում չկովել. այլ ընդհանրապես, թագավորի համար նա ասում է. «Թէ հարկաւորի ի թշնամեաց, անարդութիւն է ոչ տալ պատերազմ» (Մխ. ԿԶ. 63): Ուրիշ տեղ նա ասում է, թե խոնարհութեանն իր չափը պիտի ունենա. խոնարհվելով չպիտի բնկնել դեպի և լինել «կերակուր անմտաց՝ ոչ գիտելով զպատիւ անձին». «զի խոնականութեամբ խոնարհիլն՝ տիրապէս խոնարհութիւն է, իսկ անիմաստաբարն՝ եղծուցն՝ ոչ գիտելով զօրինակ խոնարհութեան զժամանակի և զտեղոյ՝ քստ զանազանութեան» (Մխ. ԼԸ. 43): Անիմաստաբար, այսինքն՝ անխելք, անմիտ կերպով խոնարհվելը, ուրեմն, «եղծում», այսինքն՝ ավերում, քայքայում է պատճառում: Բացի այդ՝ անձնապատվութեանը չպիտի մոռանալ և դրա համար չպիտի վախենալ մահից:

Այս բոլորի հետ գտնում ենք շատ վորոշ ու կարուկ կերպով արտահայտված նաև այն միտքը, թե յերկու շարիքից փոքրագույնը պիտի ընտրել և թե մահն ավելի փոքր շարիք է, քան մշտական տանջանքն ու զրկանքը: Ուստի ավելի լավ է միանգամից մեռնել ու վոչնչանալ, քան հրում ու ջրում տանջվել շարունակ:

Ի չափողէ դերծեալ ի ձեռանէ որեւն՝ զնտատեսակ գոլով զնտին. և նորա զայրացեալ սոսէ. երթ կերակուր լեր թոչնոց: Որում ասաց. Բաւական է ի կապիդ ի հուր և ի ջուր տանջել. ես պարզաբար կերակուր տխորժեմ թոչնոց լինել:

Միտք առակիս այս է. զի միջոց է ընդ տանջանս և ընդ տանջանս, ընդ զրկանս և ընդ զրկանս, յորոց եթէ պատահի, հարկաւոր է զհանդարտագոյնն ընտրել ի հզօրագունէն, և ի մեծամեծաց զփոքրագոյնս:

Մխ. ԽԳ. 46.

Այսպես և Ֆրիկը, թաթարներից հայ ազգի կրած տառապանքները նկարագրելուց հետո, ասում է, թե ավելի լավ է հայերի համար ջնջվել ու մեռնել ու պրծնել, քան թե մշտապես չարչարվել:

Արդ եթէ չենք ինչ պիտանի,
եւ կամ չունինք գործ ինչ բարի...
Նա՛ դու ջրնջէ՛ զմեզ մէկ հետի...

Վերջացնելով սոցիալական հարաբերությունները այս տեսութեանը զլրատվորապես Մխիթար Գոշի առակների հիման վրա՝ կարծում եմ, թե պարզվեց, վոր 12-րդ դարում Հայաստանում գոյութեան է ունեցել աշխատավոր դասակարգի պայքարն ընդդեմ ազնվականութեան և յեկեղեցականութեան: Առակագիր Մխիթարը, լինելով հոգևորականութեան նշանավոր ներկայացուցիչը և բարձր ազնվականութեան անձնական բարեկամը, բնականաբար չպիտի ճշտութեամբ և ամբողջութեամբ տար այդ դասակարգային կռիվը իրական ընդարձակ պատկերը: Բայց թե իրոք յեղել է մի հեղափոխական շարժում, այդ շատ մեկին տեսնում ենք առակների մեջ: Պայքարող աշխատավորութեան գաղափարներն ու ձգտումները, սակայն, կազմակերպված ձևով չեն յերևան գալիս: Աշխատավորները, լինեն քաղաքացի թե շինական, արդեն յեկել են այն գիտակցութեան, վոր իրենք տանջվում են, իսկ ազնվականութեանն ու հոգևորականութեանը միայն վախում են: Նրանք

դժգոհ են իրենց վիճակից, քննում են իշխանների արարքները, արտնջում են նրանցից, և վերջիվերջո ազնվականներին անպետք և ավելորդ ծանրաբեռնություն են համարում և նույն իսկ յերկիրն ավերողներ: Մյուս կողմից՝ ինչքան ել հոգևորականությունը ջանում և մարդկանց մեջ կրոնամոլություն բորբոքել և նույն իսկ նրանց զրգռել ընդդեմ աշխարհն «այլազգիների», բայց և այնպես հոգևորականներից ել դժգոհ են, նրանց ել պարսավում ու ծաղրում են: Յեկեղեցու վերաբերմամբ անտարբերություն և յերևում առակների մեջ, և նույն իսկ նախապատվությունը մարմնին և արվում և վոչ հոգուն:

ԱՏՈՒԳՎ ԱԾ Է 1971 Ք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԱՅՄԱՆ
ԵՐԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՒՊԱԿԱՏԻ
ԵՐԵՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՒՊԱԿԱՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ